Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2(02)
Ζ-39

215

ՀԱՅՏԱՍՏԱՆ

280
865-ԶԿ
1875

2010

280
865-ՀԱ
2(02)
Հ-39

ՀԱՒԱՏՔ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐՈՒԱԾ

1005
20152

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՓԱԶԵԱՆ

1875

11703

Հրամանաւ Հասարակաց կրթութեան Կայսերական Ժողովոյ

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼ· Ա

ԳՐԳԻՍ ՆՊԱՏԱԿԸ

Ի՞նչ է հաւատք — Ընոր հարկաւորութիւնը — Ճշմարիտ Քրիստոնէին հաւատքը գլխաւորապէս Տէր Յիսուս Քրիստոսի կը նայի։ 1

ԳԼ· Բ

ՀԱՒԱՏՔԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Աստի մէջ պահուած ստակը — Հօրը վստահող աղջկան պատմութիւնը — Աստուծոյ պահանջմունքը մեր օգտին համար են — Աստուծոյ վրայ վստահութիւն ունենալ — Աստուծոյ շնորհքը ձրի պարգեւ է։ 9

ԳԼ· Գ

ԱԲԵԼ, ԵՆՈՎՔ, ՆՈՅ

Աբելի և Կայենի մէջ եղած տարբերութիւնը — Ենովքայ Աստուծոյ հետ քալելը և երկինք փոխադրուիլը — Հաւատքին աղդեցութիւնը — Նոյ Աստուծոյ պատուիրածին համեմատ տապանը կը շինէ և արդարութիւն կը քարոզէ — Ուրիշ մարդոց անհոգութիւնը — Նոյ և անոր ընտանիքը ջրհեղեղէն կ'աղատուին, ուրիշները կը կորսուին։ 16

ԳԼ· Դ

ԱԲՐԱՀԱՄ

Աբրահամ Աստուծոյ հրամանին հնազանդե-

լով հայրենիքը կը թողու — Իսահակայ ծնունդը — Սաստիկ փորձ մը կ'ըլլայ Աբրահամու հաւատքին — Անոր հաւատքին ոյժը — Փորձութեան տեղը ուրախութեան տեղ կ'ըլլայ։ . . . 31

ԳԼ. Ե

ՄՈՎՍԷՍ

Մովսէսի ծնունդը — Փարաւոնի աղջիկը կ'որդեգրէ զանի — Անիկա աշխարհիս հարստութիւնն ու պատիւը մերժելով կ'որոշէ անարգ Իսրայէլացւոց հետ միանալ և Աստուծոյ ծառայել — Մովսէսի վարձատրուիլը — Անոր օրինակէն ընթերցողին քաղելու օգուտը։ 49

ԳԼ. Զ

ԴԱՆԻԷԼ ԵՒ ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ

Ասոնք կը ցուցընեն իրենց հաւատքը չհնազանդելով մարդոց այն պատուէրներուն որ Աստուծոյ խօսքին հակառակ են — Կը մերժեն թագաւորին կերակուրն ուտել — Կը մերժեն նաբուգոդոնոսոր թագաւորին շինած արձանին երկրպագութիւն ընել — Հնոցը կը նետուին և անվնաս կ'աղատին — Դանիէլ կը փորձուի — Թագաւորին պատուէրին չհնազանդելով աղօթքը կը շարունակէ — Առիւծներու գուբը կը նետուի — Կ'աղատի — Հարկաւոր դասեր։ . . . 59

ՎԵՐՋԱԲԱՆ

Համառօտ յիշատակութիւններ — Հաւատքն ամէն դարու մէջ մի և նոյն է — Ցորդոր ընթերցողին։ 73

ՀԱԻԱՏՔ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԲԱՑԱՏՐՈՒԱԾ

ԳԼՈՒԽ Ա.

Գրքոյն նպատակը։ Հաւատք ի՞նչ է։

Սիրելի ընթերցողք,

Այս գրքոյկը հաւատքի վրայ է, և սա նպատակով գրուեցաւ, որ օգնէ ձեզի լաւ իմանալու և հասկընալու թէ ի՛նչ է հաւատք, որպէս զի ձեռք բերէք զայն։

Գրքիս հեղինակն իբրեւ բարեկամ կը խօսի ձեզի։ Կ'ուզէ՞ք լսել անոր ըսածը, և ուշադրութեամբ մտիկ ընել, որ այս հարկաւոր նիւթը հասկընաք։

Եթէ այս փափաքն ունիք, կրնաք իմաստուն ըլլալ և փրկուիլ։ Աստուած իր Սուրբ Գիրքին մէջ ձեր հասակը եղողներուն կ'ըսէ, "Զիս կանուխ փնտռողները զիս կը գտնեն"։ Գիտէք որ Սուրբ Գիրքին մէջ հաւատքի վրայ գրուած շատ բան կայ։

Դուք գիտէք որ իւրաքանչիւր մարդ հա-

ւատք ունենալու է, ապա թէ ոչ չկրնար աստուածահաճոյ և երջանիկ ըլլալ։ Աստուածաշունչը կ'ըսէ, "Առանց հաւատքի անհնար է Աստուծոյ հաճոյ ըլլալ"։

Ուստի պարտիք հաւատք ունենալ եթէ կ'ուզէք Աստուծոյ հաճոյ ըլլալ, անոր օրհնութիւնը վայելել այս աշխարհիս մէջ, և անոր ներկայութեան ուրախութիւնը լիովին ստանալ երբ աշխարհէս յաւիտենականութեան կը փոխադրուիք։

Ասկէ յայտնի է թէ որչափ հարկաւոր է ձեզի գիտնալ թէ ի՞նչ է հաւատք։

Գիտէք թէ Սուրբ Գիրքն Աստուծոյ խօսքն է. Աստուած անով կը խօսի և մեզի կ'իմացընէ թէ ինք ո՞վ է, ո՞ւր կը բնակի, ի՞նչ ըրած է և ի՞նչ պիտի ընէ. կ'իմացընէ նաեւ թէ մենք ո՞վ ենք, ի՞նչ ըրած ենք և ի՞նչ ընել պարտինք անոր հաճոյ ըլլալու համար։

Սուրբ Գիրք ուրիշ աշխարհի մը վրայով ալ կը խօսի, այսինքն դերեզմանէն անդին հանդերձեալ վիճակի մը վրայով, իմացընելով թէ արդարոց համար երջանկութեան տեղ մը, և ամբարշտաց համար թշուառութեան տեղ մը կայ պատրաստուած։

Սուրբ Գիրքին մէջ Աստուած կը պատմէ նաեւ Յիսուս Քրիստոսի վրայով, թէ անիկա աշխարհ եկաւ և մեռաւ մեղաւորները փրկելու, և թէ անոնք որ կը հաւատան Անոր՝ պիտի փրկուին,

և անոնք որ չեն հաւատար՝ պիտի դատապարտուին։ Անոնք և ասոնցմէ աւելին Գիրքը յայտնեմեզի Աստուած իր Սուրբ Գիրքին մէջ։

Հիմա պիտի ըսեմ ձեզի թէ ինչ է հաւատք։ Հաւատքն է ճշմարիտ համարել ինչ որ Աստուած ըսած է, և ըստ այնմ վարուիլ, Անոր խոստումներուն ապաւինիլ և Անոր պատուէրը կատարել։

Ասիկա հաւատոյ ընդհանուր սահմանն է։ Հաւատքն այս իմաստով կը վերաբերի այն ամէն բաներուն զոր Աստուած ըսած է Աստուածաշունչին միջոցաւ, թէ երեն վրայ թէ իր կառավարութեան և թէ իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի վրայ։

Հաւատքը կը վերաբերի նաեւ այն ամէն բաներուն զորս Աստուած հրամայած կամ արգիլած է։ Բայց մասնաւորապէս Քրիստոնէական փրկարար հաւատքը, այսինքն այն հաւատքը որով մեղաւոր մը կը փրկուի, կրնայ սա կերպով սահմանուիլ։ Այս հաւատքը Յիսուս Քրիստոսի ապաւինիլ է, այսինքն մի միայն Անոր դիմել մեր հոգւոյն փրկութեանը համար, մեր ամէն բաներն Անոր յանձնել և Անոր պատուիրանքը պահել։ Բաւական չէ լոկ խօսքով ըսել թէ մենք Աստուածաշնչին կը հաւատանք. եթէ չհնազանդինք անոր խօսքերուն, մեր կը հաւատանք" ըսելը անօգուտ է։ Կան ոմանք որ կը հաւատան ընդհանուր կերպով մը թէ Աս-

տուածաշունչն Աստուծոյ խօսքն է, և ընդհակառակը ճշմարիտ կ'ընդունին, բայց այդչափը չբաւեր։

Ճշմարիտ հաւատացեալ մը ոչ միայն Աստուծոյ ըսածները ճշմարիտ կը համարի, այլ նաեւ իր հաւատքին պէս կը գործէ։ Բաւական չէ ըսել թէ կը հաւատամ որ մի միայն փրկիչն Յիսուս է, եթէ անոր չհետեւիմ։ Զի Քրիստոս լոկ փրկիչ դիտնալովդ՝ Անոր հաւատացած չես ըլլար։ Հաղարաւորներ այս տեսակ հաւատքունին, սակայն ճշմարիտ փրկարար հաւատքէն բոլորովին զուրկ են։ Եթէ ճշմարտապէս հաւատաս Յիսուսի, պէտք է որ հնազանդիս նաեւ Անոր, ինչպէս որ ինք ըսաւ, "Ով որ իր խաչը չվերցներ ու իմ ետեւէս դար, չկրնար իմ աշակերտս ըլլալ"։

Այս քանի մը խօսքերով կը ջանամ ըստ կարի հասկցընել ձեզի թէ ի՞նչ է ճշմարիտ հաւատքը։ Կը յուսամ որ ասիկա աւելի պարզ կերպով մը պիտի ցուցընեմ ձեզի դրբոյկս լմնցնելէն առաջ։ Քանի մը մարդոց օրինակներ յառաջ պիտի բերեմ, որոնք գործքով ցուցուցին իրենց հաւատքը։ Սակայն անկէ առաջ քանի մը բաներ ունիմ ձեզի ըսելու։

Ճշմարիտ Քրիստոնէին հաւատքը գլխաւորապէս Տէր Յիսուս Քրիստոսի կը նայի։ Ան է մի միայն փրկիչ, Ան է մի միայն ճանապարհ և Անոր հաւատալով միայն կրնանք փրկուիլ։

Սուրբ Գիրքը կ'ըսէ, "Հաւատա Տէր Յիսուս

Քրիստոսի, ու պիտի փրկուիս"։ Դարձեալ՝ "Ան որ չհաւատար՝ պիտի դատապարտուի"։ Այս խօսքերէն յայտնի կը տեսնուի թէ փրկութիւնը փրկչին վրայ ճշմարիտ հաւատք ունենալէն կախում ունի։

Գիտէք դուք ինչ որ Աստուածաշունչն Աստուծոյ Որդւոյն Յիսուսի վրայով խօսած է, անոր ծննդեան, կենաց և մահուան վրայ։ Թէեւ անիկա երկինքը Աստուծոյ աչ կողմն էր ու Աստուած էր, սակայն այս աշխարհս գալով մարդ եղաւ և կոյս Մարիամէն ծնանելով՝ ուրիշ զաւակաց պէս մեծցաւ, "Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք դանելով"։ Երբ երեսուն տարեկան եղաւ, իր պաշտօնն կատարելու սկսաւ. բոլոր մարդոց քարոզեց որ ապաշխարեն ու իրեն հաւատան, ապա թէ ոչ պիտի չկրնան երկնից թագաւորութիւնը ժառանգել։ Յիսուս շատ սքանչելի հրաշքներ գործեց, որոնք վկայեցին թէ արդարեւ Աստուած Անոր հետ էր, և թէ ինքն Աստուծոյ գործքերը կ'ընէր։

Անոր կենցաղավարութիւնը բոլորովին սուրբ էր և ամէն տեսակ մեղքէ ազատ։ Անոր օրինակը՝ կատարեալ բարի, անոր քարոզութիւնն՝ իմաստուն ու սրտաշարժ էր, անոր թշնամիներն անգամ ըսին թէ "Երբէք մէկը այս մարդուն պէս խօսած չէ"։ Անիկա խօսեցաւ մարդոց իրարու և առ Աստուած ունեցած բոլոր պարտաւորութեանց վրայ։

Աղդու կերպով յորդորեց որ բոլոր մարդիկ իրեն աշակերտ ըլլան, քանզի եթէ իրեն հետեւին՝ յաւիտեանս երջանիկ պիտի ըլլան, եթէ ոչ՝ յաւիտեանս թշուառ ըլլալով պիտի տանջուին։

Յիսուսի սորվեցուցածներն ասոնք էին, և այս կերպով աշխատեցաւ զմարդիկ լուսաւորել. և վերջապէս յանձն առաւ չար մարդոցմէ բռնուիլ, խաչ հանուիլ և սպաննուիլ, որպէս զի իր մահուամբը աշխարհիս մեղայ քաւութիւն ըլլայ, և ճամբայ բացուի ուսկից բոլոր ապաշխարող և Անոր հաւատացող մեղաւորք կարող ըլլան երկինք մտնել, և հոն միշտ երջանիկ ըլլալ։

Յառնելէն երեք օր ետքը դերեզմանէն յարութիւն առնելով՝ իր աշակերտներուն երեւցաւ և պատուիրեց անոնց որ երթան բոլոր աշխարհ, իր Աւետարանը քարոզեն բոլոր ստեղծուածոց։

Վերջապէս իր բարեկամներէն շատերուն առջեւ երկինք համբարձաւ, ուր միշտ կենդանի է մեզի ու բոլոր աշխարհիս համար բարեխօսութիւն ընելու։

Ասիկա մեր Փրկչին համառօտ պատմութիւնն է, զոր Աստուածաշունչը կ'ընէ։

Արդ Աստուած կը պահանջէ որ հաւատանք ասոր այնպիսի հաւատքով որ մեր ընթացքը կ'ուղղէ, և զմեզ Յիսուս Քրիստոսի հետեւող

և աշակերտ կ'ընէ։ Այս է Յիսուսի հաւատալ, և մի միայն ճշմարիտ հաւատք ունենալ Յիսուս Քրիստոսի վրայ։ Բաւական չէ որ անոր չէք հակառակիր, և մտքով միայն ճշմարիտ կը համարէք ինչ որ Աստուած ըսած է իր Որդւոյն վրայով։ Եթէ ձեր հաւատքը չբարեկարգէ ձեր գործքերը, և չառաջնորդէ ձեզի՝ Փրկչին պատուիրածին պէս ընել, եթէ այն հաւատքն ըզձեզ Յիսուսի բարեկամ չընէ, յայտնի է թէ Անոր վրայ ճշմարիտ հաւատք չունիք։

Արդ, սիրելի ընթերցողք, եթէ ուշադրութեամբ կարդաք, և կարդացածնիդ լաւ հասկընաք, պիտի տեսնէք թէ ինչ է Քրիստոսի վրայ ճշմարիտ հաւատք ունենալը, այսինքն՝ ինքզինքնիդ անոր խնամոցը յանձնել, փրկութեան համար մի միայն Անոր նայիլ, անոր պատուիրանքներուն հնազանդիլ և Անոր նմանելու ջանալ։ Յիսուսի վրայ այսպիսի հաւատք ունենալը պիտի շիտակէ ձեր կենցաղավարութիւնը, Անոր պահանջածն ընելու պիտի առաջնորդէ ձեզի, զձեզ Փրկչին ճշմարիտ բարեկամ պիտի ընէ, և դուք ճշմարիտ Քրիստոնեայ պիտի ըլլաք։

Աստուածաշնչին մէջ Աստուծմէ պահանջուած հաւատքն այս է, և Աստուած այս տեսակ հաւատքը միայն կ'ընդունի։ Այս տեսակ հաւատքով մարդուս հոգին կը պատրաստուի երկնից թագաւորութեանը համար։ Եթէ այս հաւատքը կ'ուզէք ունենալ, պէտք է որ Աստուածա-

Հունչն ուշադրութեամբ կարդաք, և սրտի մտօք ջանաք Աստուծոյ բոլոր ըսածները դիտնալ, ստէպ աղօթք ընէք որ Աստուած օգնէ ձեզի Անոր կամքը հասկընալ և ընել, և այն հաւատքը տայ ձեզի զոր բոլոր ճշմարիտ Քրիստոնեայք ունին։

Քննեցէք, իմ փոքրիկ բարեկամներս, թէ ինչո՞ւ հաւատքի կարօտութիւն ունիք։ Դուք խորին զգացմամբ խորհեցա՞ք երբէք թէ մեղաւոր էք, ի բնէ չար սիրտ ունիք, Աստուծոյ անհնազանդ էք, ուստի և Անոր դատապարտութեանը տակ էք։ Աստուածաշունչը կ'ըսէ, "Այն որ չհաւատար, արդէն դատապարտուած է"։ Այս դատապարտութենէն ազատուիլ Յիսուս Քրիստոսով միայն կ'ըլլայ։ Ինք կ'ըսէ թէ, "Որդին մարդոյ եկաւ որ կորսուածը փնտռէ ու դանէ։" Դուք ուղիղ ճամբայէն մոլորած՝ կորսուած էք. եթէ Յիսուս Քրիստոսով չփըրկուիք, յաւիտեանս պիտի կորսուիք. այս է պատճառն որ դուք Քրիստոսի հաւատալու կարօտ էք։ Ո՜հ, խորհեցէք ասոր վրայ, իմացէք ասիկա, և անատեն խորին զղջմամբ փրկչին ոտքը ձգեցէք ինքզինքնիդ և աղաղակեցէք, "Տէր, ազատէ զիս՝ եթէ ոչ կը կորսուիմ"։ Եթէ միայն Անոր ապաւինելով այս բանն անկեղծ սրտիւ ընէք, ահա փրկարար հաւատք ունեցած կըլլաք. ձեր մեղքերը պիտի ներուին ձեզի, և դուք պիտի փրկուիք։

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՒԱՏՔԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Հիմա պիտի ջանամ քանի մ'օրինակներով ցուցընել ձեզի թէ ի՞նչ է հաւատք ունենալը։ Դիցուք թէ ձեր հայրը ըսէ ձեզի որ այս ինչ արտին մէջ դումար մը ստակ կայ այն ինչ քարին տակ պահուած, և իմացընէ ձեզի որ եթէ երթաք զայն հանէք, ձերը պիտի ըլլայ այն ստակը։ Գիտնալով որ ձեր հայրը ճշմարտախօս է, և ձեզ խաբելու միտք չունի, անշուշտ դուք պիտի հաւատաք անոր խօսքին։ Պէտք չէ որ անիկա ձեզի ըսէ թէ ինչպէս գիտցաւ որ հոն ստակ կայ, բաւական է որ ըսէ թէ հոն ստակ կայ. անոր միանգամ ըսելուն դուք պիտի հաւատաք։ Բայց ի՞նչպէս պիտի ցուցընէք ձեր հաւատքը։ Անմիջապէս պիտի երթաք յիշուած տեղը այն ստակը փնտռելու, և հանելով զայն տուն պիտի բերէք։ Եթէ ձեր հօրն ըսածը չազդէ ձեզի, և դուք անփոյթ ըլլաք ստակը փնտռելու, յայտնի է թէ վստահ չէք ձեր հօրը վրայ և անոր խօսքերուն չէք հաւատար. քանզի եթէ հաւատայիք, անմիջապէս դանձը դտնելու պիտի ջանայիք։

Արդ Աստուած ձեր երկնաւոր Հայրը՝ ձեզի խօսած է երկնից և հոն տանող ճամբուն վրայով,

իմացընելով որ կատարեալ երջանկութիւն պիտի վայելէք երկնից մէջ, եթէ այն ճամբան բռնելով հասնիք հոն։ Պատուիրած է ձեզի որ ապաշխարէք, Յիսուս Քրիստոսի անուամբ իրմէ մեղաց թողութիւն խնդրէք և ասկէ ետքը Քրիստոսի աշակերտ ըլլաք, այսինքն անոր պատուիրանացը հնազանդիք։ Իմացուցած է նաեւ որ եթէ ասիկա ընէք, անպատճառ երկինք պիտի հասնիք, և թէ ընդհակառակն եթէ չապաշխարէք ու այն ցուցուած ճամբայէն չքալէք, ձեր բաժինը դժոխքի մէջ ունենալով հոն յաւիտեանս թշուառ պիտի ըլլաք։

Աստուած այս բաները պարզապէս յայտնած է Աստուածաշնչին մէջ։ Եթէ դուք ձեր հոգիներուն երջանիկ ըլլալը կ'ուզէք, այս բաները շատ հարկաւոր պիտի համարիք։ Եւ եթէ հաւատաք Աստուծոյ ըսածին, այն հաւատքը խորին տպաւորութիւն պիտի ընէ ձեր մտաց վրայ։ Եթէ ճշմարտապէս հաւատաք ինչ որ Աստուած ըսած է այս նիւթիս վրայով, անհոգ պիտի չմնաք. ոչ, անտարակոյս պիտի ջանաք այն նեղ ճամբան մտնել որ դէպ 'ի կեանք կը տանի։ Փութով պիտի աշխատիք ձեր հոգւոյն փրկութիւնն ապահովցընել. պիտի չհամարձակիք անապաշխար մնալով վտանգաւոր վիճակի մը մէջ կենալ, այլ պիտի ապաշխարէք ու Յիսուս Քրիստոսի երթալով՝ մեղաց թողութիւն և հոգւոյ փրկութիւն պիտի խնդրէք։

Աստուած ինչ պարտաւորութիւններ որ դրած է ձեր վրայ, անոնց բոլորն ալ պիտի կատարէք փրկչին օգնութեանը դիմելով։ Նախ Աստուծոյ թագաւորութիւնն և անոր արդարութիւնը պիտի խնդրէք, վստահ ըլլալով անոր սա խոստմանը թէ պէտք եղած "բոլոր բաներն ալ ձեզի պիտի տրուին"։ Երբ Աստուծոյ՝ իր սուրբ խօսքին մէջ ըսածներուն հաւատաք, անշուշտ այսպէս պիտի ընէք։

Եթէ դուք ձեր ներկայ և գալու վիճակին վրայ անհոգ ու անփոյթ ըլլաք, հնարաւո՞ր բան է որ դուք իրօք ճշմարիտ հաւատացեալ ըլլաք. ոչ երբէք։ Կրնաք ըսել, "Հաւատացեալ ենք"։ բայց եթէ ձեր հաւատքը ձեզ չիշարժէ, ոչ ալ ձեր գործքերը շիտկէ, այնպիսի հաւատքը մեռեալ է, ինչպէս կ'ըսէ Յակոբոս Առաքեալ, "Հաւատքը թէ որ հետը գործ չունենայ ըստ ինքեան մեռած է"։ "Քանզի ինչպէս որ մարմինը առանց հոգիի մեռած է, նոյնպէս ալ հաւատքը առանց գործքերու մեռած է"։

Ճշմարիտ հաւատոյ մէջ էական և շատ կարեւոր բան մ'ալ Աստուծոյ վրայ վստահութիւն ունենալ է։ Ասիկա լաւ բացատրելու համար ուրիշ օրինակ մը յառաջ բերեմ։

Բարեպաշտ մարդ մը հաւատքի վրայով իր աղջկանն աղէկ դաղափար մը տալու համար հետեւեալ կերպը բռնեց։

Աղջիկը դեռ փոքր ըլլալով պզտիկ խաղալիկ

մ՚ունէր, որուն բոլոր սրտով սէր կապած էր։ Օր մը հայրն ըսաւ անոր, «Սիրելիս, դուն խաղալիկ մ՚ունիս»։ «Այո, հայրիկ», պատասխանեց աղջիկը։ -«Շատ կը սիրես զանիկա, այնպէս չէ՞»։ «Այո, հայրիկ», դարձեալ պատասխանեց աղջիկը։ Անատեն հայրն ըսաւ անոր, «Կ՚ուզեմ որ կրակը նետես զայն»։ Արտասուալից աչքերով աղջիկը հօրը նայեցաւ, իբր թէ կը հարցնէր թէ այս ըհողութեան պատճառն ի՞նչ կրնար ըլլալ։

«Սիրելիս», ըսաւ հայրը, «դուն աղէկ դիտես թէ ինչ որ ես քեզի կը պատուիրեմ քու օգտիդ համար է, երբէք քեզի անօգուտ բան մը չեմ պատուիրեր»։ Աղջիկը քիչ մ՚ալ նայեցաւ հօրը, և անատեն քաջութեամբ խաղալիկը կրակը նետեց։ «Շատ աղէկ, հոն թող մնայ», ըսաւ հայրը, «ուրիշ օր մը կը խօսինք ատոր վրայ»։ Քանի մ՚օր ետքը հայրը դնաց ուրիշ մեծ ու գեղեցիկ խաղալիկ մը ծախու առաւ և զանիկա աղջկանը տալով ըսաւ, «Աղջիկս, ասիկա քուկդ է, քանզի հաւատացիր ինծի և հնազանդեցար՝ երբ ըսի քեզի թէ աղէկ է որ խաղալիկդ կրակը նետես։ Ինծի հաւատալդ այս դանձը բերաւ քեզի. բոլոր այս բաներն ըրի, որպէս զի հասկցնեմ քեզի թէ ի՞նչ է հաւատալը։ Դուն իմ հրամանովս խաղալիկդ կրակը նետեցիր, և հաւատացիր ինծի, այսինքն վստահութիւն ունեցար թէ ատիկա քու օգտիդ

համար ընել տուի և թէ ես դքեզ պիտի չխաբեմ։

Նոյն վստահութիւնն ունեցիր նաեւ Աստուծոյ վրայ։ Հաւատա որ Աստուած ինչ որ կ՚ըսէ Սուրբ Գրքին մէջ քու օգտիդ համար կ՚ըսէ»։

Սիրելի փոքրիկ ընթերցողք, այս օրինակէն կը սորվիք թէ ի՞նչ է ճշմարիտ հաւատքը, և ի՞նչ է Աստուծոյ վրայ վստահութիւն ունենալ։ Երբ Աստուած կը պատուիրէ ձեզի մէկդի ձգել այն սնոտի բաներն որ մարդուս սիրտը կը հեռացնեն Անկէ, պէտք է հաւատաք որ այն պատուէրը բուն ձեր օգտին համար է։ Հաւատալու էք նաեւ որ եթէ հնազանդիք Աստուծոյ, Աստուած ալ այն սնոտի բաներուն փոխարէն աւելի աղէկ բաներ պիտի տայ ձեզի։ Աստուած կը պատուիրէ ձեզի, «Մի սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մէջ է». եթէ հնազանդիք անոր, ձեզի երկնաւոր բաներ պիտի շնորհէ, որ աշխարհի պարգեւներէն լաւագոյն են։ Երբ Աստուած կը ստիպէ զձեզ անվայել ղուարճութիւններէ ետ կենալ, և այս չար աշխարհիս ունայնութիւններէն հեռանալ, պէտք է վստահ ըլլաք որ թէպէտ այս պատուէրին հնազանդելով առ ժամանակ մի պատերազմ ու ցաւ կը կրէք, սակայն եթէ յոժարամտութեամբ հընազանդիք, վերջապէս պիտի տեսնէք որ բոլոր այն բաներն որ Աստուած ձենէ կը պահանջէ՝ ձեր օգտին համար են։

Աստուածաշնչին մէջ Աստուած ձենէ կը պա-

հանջէ մեղանչական զուարճութիւններէն և չար ընկերութիւններէն հեռու կենալ, ձեր անձն ուրանալ, ձեր կամքն Աստուծոյ կամացը հնազանդեցնելով՝ ձեր խաչը վերցընել և Յիսուսի հետեւիլ։ Թերեւս կը խորհիք թէ այսպէս ընելով թշուառ կ'ըլլաք, բայց յիշեցէք որ Աստուած բան մը չըներ, ոչ ալ կը հրամայէ ձեզի ընել, առանց ձեր բարիքը խորհելու։ Վստահ եղէք անոր, ձեր խաղալիկները կրակը նետեցէք, ձեր աշխարհային փափաքները ոտքի տակ առէք, և հնազանդեցէք Աստուծոյ ձայնին. ետքը պիտի տեսնէք թէ այս է ամենէն աղէկ ընթացքն, և երջանկութեան միակ ճամբան։ Տէրը յաւիտեանս պիտի հոգայ զանոնք որ իրեն կը վստահին։ Դաւիթ մարգարէն իր յատուկ փորձառութենէն առաջնորդեալ կ'ըսէ, "Տէրոջը յուսացող մարդը երանելի է"։

Այս բարեպաշտ մարդուն պզտիկ աղջիկն առաջ կը խորհէր, որ եթէ հօրը հնազանդելով իր խաղալիկը կրակը նետէր, խաղալու բան մը պիտի չունենար, ուստի շատ տխուր էր։ Բայց վստահ էր թէ իր հայրը չպահանջեր բան մը, որ անոր օգտին համար չըլլայ։ Հաւանական է թէ դժուարութիւն և ցաւ զգայ, երբ հօրը հնազանդելով այն ներկայ զուարճութիւնը թողուց, չտեսնուած դալու բարիքի մը համար. բայց մեծ հատուցում ընդունեց։ Շատ տղայք կը խորհին որ եթէ Աստուծոյ խօսքին հնազան-

դելով իրենց մեղանչական զուարճութիւնները թողուն, իրենց աշխարհային փափաքները զոհեն, ու կրօնական պարտուց միայն հոգ տանին, խեղճ և ապերջանիկ պիտի ըլլան։ Բայց այնպէս չէ. վասն զի Աստուած բնաւ չպահանջեր մենէ բան մը որ մեր օգտին համար չէ։ Փորձեցէք այս բանը, թէեւ դժուար պիտի երեւի ձեզի չար ճամբաները թողուլ, և ձեր կամքը Յիսուսին ծառայելու խոնարհեցնել, սակայն եթէ այսպէս ընէք, մեծ հատուցում պիտի ընդունիք, այնպէս որ թէ այս աշխարհիս և թէ յաւիտենականութեան մէջ կատարեալ երջանկութիւն պիտի վայելէք։

Սակայն դիտնալու էք որ չէք կրնար Աստուծոյ շնորհքը ծախու առնուլ, ձեր մեղանչական զուարճութիւնները թողլով. Աստուծոյ ձեզի տուած օրհնութիւններուն փոխարէն բան մը չէք կրնար վճարել, մեղայ ճամբայէն հեռանալով։ Աստուծոյ շնորհքները ձրի պարգեւներ են, չէք կրնար զանոնք ծախու առնուլ։ Երբ Աստուած կը պատուիրէ ձեզի ձեր անոտի խաղալիկները, այսինքն ձեր ամբարիշտ հաճութիւնները, մերժել, կամ բուն ձեր կամքն անոր կամացը խոնարհեցընել, այսպէս ընելու էք սա պատճառաւ որ Աստուած կը պատուիրէ, և Անոր պատուէրներն ուղիղ ու բարի են։ Պէտք է որ դուք հնազանդիք անոր՝ թէ՛ օրհնութիւններ առնէք և թէ չառնէք։ Անոր պատ-

ու իրանքներուն հնազանդեցէք, ու հետեւուելիւնն անոր խնամքին թողուցէք։ Այս է անոր վրայ վստահութիւն ունենալ, այս է հաւատք։

ԳԼՈՒԽ Գ

ՀԱՒԱՏՔԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԱԲԵԼ, ԵՆՈՎՔ, ՆՈՅ։

Աստուածաշնչին դառնալով՝ անոր մէջ յիշուած հաւատք ունեցող քանի մը բարի մարդոց օրինակներն ձեր առջեւը դնեմ։ Այս օրինակներէն կրնաք տեսնել թէ հաւատքն ի՛նչ է, և թէ ի՛նչպէս կ՚ազդէ զանիկա ունեցողներուն զգացմանցն ու վարուցը։ Պօղոս առաքեալ Եբրայեցւոց տասնումէկերորդ գլխոյն մէջ նախնի մարդոցմէ ոմանք կը յիշէ, որոնց ամենուն ալ հաւատքը վկայուած է։ Այս քանի մը մարդոց վրայ պիտի ըլլայ խօսքս։

Առաջինն Աբէլ է, ինչպէս կ՚ըսէ Առաքեալը, «Հաւատքով Աբէլ Կայենէն աւելի աղէկ զոհ մատոյց Աստուծոյ, որ անով վկայուեցաւ արդար ըլլալը, ինչու որ իր պատարագներուն վրայ Աստուծմէ վկայութիւն եղաւ իրեն, և անով, թէպէտ մեռաւ, բայց տակաւին կը խօսի»։

Եթէ կարդաք Ծննդոց չորրորդ գլուխը, պի-

տի դտնէք թէ Կայէն ու Աբէլ եղբայր էին, բայց իրարմէ շատ տարբեր։ Մէկը բարի էր, իսկ միւսը չար։ Մէկը հաւատք ունէր, միւսը չունէր։ Կայէնը երկրագործ էր, իսկ Աբէլը խաշնարած։ Աստուածաշունչն ասոնց վրայ այսպէս կը պատմէ, «Եղաւ որ Կայէն երկրին պտուղէն Տէրոջը ընծայ բերաւ, և Աբէլ ինքն ալ իր ոչխարներուն առջինեկներէն և անոնց պարարտներէն բերաւ, և Տէրը Աբելին ու անոր ընծային նայեցաւ, բայց Կայենին ու անոր ընծային չնայեցաւ։ ուստի Կայէն խիստ բարկացաւ ու երեսը կախեց։ Եւ Տէրը Կայենին ըսաւ, Ինչո՞ւ բարկացար, ու ինչո՞ւ երեսդ կախեցիր։ Թէ որ աղէկ ընես, ընդունելի չըլլար։ և թէ որ աղէկ չընես, մեղքը դրանը քով պառկած է։ և անիկա քեզի պիտի հնազանդի, ու դուն անոր պիտի իշխես։ Եւ Կայէն իր Աբէլ եղբօրը հետ խօսեցաւ, ու եղաւ որ երբ անոնք դաշտն էին, Կայէն իր Աբէլ եղբօրը վրայ ելաւ, ու սպաննեց զանիկա»։ Կայէն այս չարութիւնը գործելով, առաջին մարդասպանն եղաւ ու անունը մշտնջենաւոր նախատինքով ծածկեց։ Աստուած բարկացաւ անոր և անիծեց զանիկա «երկրի մէջ թափառական ըլլաս» ըսելով։

Արդ, սիրելի ընթերցողք, կ՚ուզէ՞ք հասկնալ թէ ինչու համար Աստուած հաճութեամբ նայեցաւ Աբելի ընծային, ու Կայենի ընծային տըհաճութեամբ։ Վերոյիշեալ խօսքերէն և Առա-

1005
20154

քեալին ըսածներէն յայտնի կ'երեւի մեղի ա-
սոր պատճառը, "Հաւատքով Ապէլ կայե-
նէն աւելի աղէկ զոհ մատոյց Աստուծոյ" կ'ըսէ
Առաքեալը։ Ապէլ հաւատք ունէր, և Կայէն
չունէր։ Ասիկա է երկուքին մէջ տեղ եղած տար-
բերութիւնը։ Ապէլ Աստուծոյ ճշմարտապէս հա-
ւատալով, և անոր ընդունելի զոհ մը մատու-
ցանել ուզելով, իր ոչխարներուն առջինեկնե-
րէն բերաւ։ Թերեւս իր ընծան ուլ մը կամ
գառնուկ մըն էր, որ կը նշանակէր այն զոհը,
զոր Քրիստոս մարդոց մեղացը համար Գողգո-
թայ լեռան վրայ պիտի մատուցանէր։ Երբ Ա-
բէլ իր ընծան բերաւ ու մատոյց Աստուծոյ,
զգաց թէ ինք Աստուծոյ ծառան էր, և թէ ա-
նոր կամքը կատարելու պարտական էր։ Ինք-
զինք Աստուծոյ յանձնեց, և իր ընծան բերաւ
իբր նշան թէ հաւատք ունէր, և թէ պատրաստ
էր ընել ինչ որ Տէրը անոր հրամայէր. Ապէլի
մտքին այս վիճակը հաճելի էր Աստուծոյ, որ և
այս պատճառաւ ընդունեց զԱբէլ և անոր ըն-
ծան։ Կայէն անհոգութեամբ, առանց ընտրելու
իր երկրին պտուղներէն ընծայ բերաւ Աստու-
ծոյ, և փոյթ չունէր հնազանդ տղու պէս Ա-
ստուծոյ ուզածն ընելու։ Կամաւ Աստուծոյ չծա-
ռայեց, և Անոր կամքը չկատարեց։ Հպարտ ու
կամակոր էր, ապստամբութեան հոգի ունէր։
Ուստի և Աստուած չհաճեցաւ անոր, ոչ ալ ա-
նոր ընծան ընդունեց։

Այս երկու եղբարց մէջ որչափ տարբերու-
թիւն կար։ Երկուքին ըրածն ալ Աստուծոյ եր-
կրպագութիւն ընելու ձեւ էր, սակայն մէկը
խոնարհութեամբ ու պարզմտութեամբ կ'ընէ,
իսկ միւսը անհոգութեամբ և անհնազանդ սըր-
տով. մէկը իր ընծային հետ իր անձն ալ նուի-
րեց Աստուծոյ ծառայելու և անոր պատուէր-
ները կատարելու. բայց միւսը թէեւ ընծայ մը
բերաւ, սիրտն այն ընծային հետ չէր, և պատ-
րաստ չէր Աստուծոյ կամքը կատարելու։ Մէկը
հաւատք ունէր, միւսը չունէր. այս էր սոնց
տարբերութիւնը։ Ուստի Ապէլ ընդունուեցաւ,
և Կայէն մերժուեցաւ, յետոյ մէկը մարդաս-
պան, իսկ միւսն իր հարազատ եղբօրը բար-
կութեանը զոհ եղաւ։

Սիրելի ընթերցողք, այս օրինակէն կը տես-
նէք թէ որչափ հարկաւոր է հաւատք ունենալ։
Առանց հաւատոյ չէք կրնար ուղղութեամբ ծա-
ռայել Աստուծոյ կամ անոր ընդունելի ըլլալ։
Ապէլի օրինակէն կրնաք սորվիլ թէ ճշմարիտ
հաւատքն ի՞նչ է, և ի՞նչպէս կը ճանչցուի։ Կա-
յէնի օրինակէն ալ կը սորվիք թէ մարդս որչափ
շատ չար կրնայ ըլլալ, և ի՞նչ սոսկալի ոճիրներ
կը գործէ, եթէ կ'ապրի առանց հնազանդե-
լու Աստուծոյ, և կը թողու որ իր անսանձ կիր-
քը սաստկանայ իր ընկերներուն դէմ։ Ասիկա
խրատ ըլլայ ձեզի։ Աստուծոյ գացէք և խո-
նարհ սրտով խնդրեցէք Անկէ որ ձեզի տայ այն

հաւատքը, որ ձեզ չար ճամբաներէ պիտի պահէ, և սուրբ ու երջանիկ ընէ յաւիտեան։

Երկրորդ օրինակը, որ Առաքեալը յառաջ կը բերէ՝ Ենովք է (Եբր. ԺԱ. 5։) Անոր վրայ կ'ըսէ «Հաւատքով Ենովք փոխադրուեցաւ որ մահը չտեսնէ, ու մէկ տեղ մը չէր գտնուեր, քանզի... առաջ վկայուեցաւ թէ Աստուծոյ հաճելի էր»։ Փոխադրուեցաւ ըսելով երկինք առնուեցաւ կը հասկացուի, և մահ չտեսնելը կը նշանակէ թէ չմեռաւ, ըսել է թէ Ենովք՝ իր բարեպաշտ ու սուրբ վարմունքովն այնչափ հաճելի եղաւ Աստուծոյ, որ չմեռաւ այլ Աստուած իսկոյն զանիկա երկինք առաւ։ Բայց ի՞նչ էր անոր այնչափ բարեպաշտ ու սուրբ ըլլալուն պատճառը. ի՞նչպէս այնչափ ընդունելի եղաւ Աստուծոյ, որ այս կեանքին չարիքներէն զերծ մնալով և առանց մահուան ցաւերը զգալու Աստուծոյ ներկայութեանը կանչուեցաւ երկնից մէջ եղած ցնծութիւնները վայելելու։ Առաքեալն ասոր սա պատասխանն կուտայ «Հաւատքով Ենովք փոխադրուեցաւ». հաւատքն էր որ զանիկա այսպէս բարի ըրաւ։ Ենովք Աստուծոյ հաւատալով և զանիկա սիրելով՝ կը ջանար միշտ անոր կամքը կատարել, իր խորհուրդներն ու սիրտն Աստուծոյ վրայ էին, ասոր համար էր որ Աստուած զանիկա քովը առնելու հաճեցաւ։ Ծնն. Ե. գլխոյն 24 համարին մէջ Ենովքայ վրայ կը պատմուի թէ «Աստուծոյ հետ քալեց և չէր գտնուեր, ինչու որ Աստուած առաւ զանիկա»։ Ասիկա շատ համառօտ պատմութիւն մըն է, բայց շատ բան կը պարունակէ։ «Աստուծոյ հետ քալեց», այսինքն այնպիսի զգացումներ կ'ունենար և այնպիսի գործեր կ'ընէր որ կը հասկցուէր թէ Աստուած անոր ընկերն էր։ Ենովքայ հաւատքն այնչափ զօրաւոր էր, որ իր մտաց առջեւը շարունակ զԱստուած և յաւիտենական բաները կը բերէր։ Կը զգար թէ Աստուած իր շուրջն ու հետն էր, և հաւատոյ աչօք շարունակ իր Արարիչը կը տեսնէր։ Այսպէս իր բոլոր կենաց օրերը հնազանդութեամբ անցուց։ Գիտէք թէ Աստուածաշունչը կը խօսի նաեւ այն չար մարդոց վրայ, որ առանց Աստուծոյ կ'ապրին այս աշխարհիս մէջ և անոր ներկայութիւնը չեն զգար։ Անոնք չեն զգար թէ Աստուած իրենց վարմունքը կը դիտէ, և այնպէս կ'ապրին ու կը գործեն որպէս թէ Աստուած չկայ, քանզի «Զուզեցին զԱստուած իրենց գիտութեանը մէջ պահել» (Հռոմ. Ա. 28)։ Բայց Ենովք Աստուծոյ հետ քալեց, զգաց թէ Աստուծոյ աչքն անոր վրայ էր։ Ենովքայ հանապազօրեայ մեծ ջանքն էր Աստուծոյ հաճոյ գործքեր գործել։ Դարձեալ կ'ըսուի թէ «Չէր գտնուեր, ինչու որ Աստուած առաւ զանիկա», ըսել է թէ աշխարհիս վրայ չէր, քանզի Աստուած զանիկա երկինք առած էր։ Թերեւս բնաւ մէկը զանիկա չտեսաւ երբ

երկինք առնուեցաւ։ Երբ Եղիան երկինք վերացաւ, Եղիսէն տեսաւ զանիկա և տեսածը կը պատմէ, այնպէս որ մարդիկ կրցան դիտնալ թէ Եղիա մարգարէն առանց մեռնելու երկնային աշխարհը գնաց։ Բայց եթէ Ենովքայ երկինք երթալը մէկը չտեսաւ, անոր ուր ըլլալը պիտի չգիտցուի։ Սակայն Հին Կտակարանին մէջ Աստուած կը վկայէ մեղի թէ անիկա «Զէր դտնուեր, ինչու որ Աստուած առաւ զանիկա», և Նոր Կտակարանին մէջ կը կարդանք, «Հաւատքով Ենովք փոխադրուեցաւ որ մահ չտեսնէ»։

Սիրելի փոքրիկ բարեկամներս, այս օրինակէն ալ կը տեսնէք թէ հաւատքն ի՛նչ է։ Հաւատքն է մտաց այն վիճակը, որով մարդս կ'ըզդայ թէ Աստուած ներկայ է, թէ մարդուս բոլոր խորհուրդները և վարմունքը կ'իմանայ, և թէ անկէ հաշիւ պիտի պահանջէ անոր բոլոր խորհուրդներուն, գործքերուն և խօսքերուն համար։

Հոս կը տեսնէք նաեւ հաւատքին ազդեցութիւնը։ Եթէ հաւատք ունենաք, անիկա պիտի առաջնորդէ ձեզի Աստուծոյ հետ քալելու, անոր հաճելի եղած բաներն ընելու և անոր բոլոր օրէնքներուն հնազանդելու։

Արդարեւ պատճառ չունիք ակնկալելու թէ դուք եւս Ենովքայ պէս առանց մեռնելու երկինք պիտի փոխադրուիք. սակայն, եթէ ճշմարիտ հաւատք ունենաք, երբ մեռնիք՝ ձեր

հոգիներն երկինք պիտի երթան Աստուծոյ հետ կենալու, և հոն անոր ներկայութիւնը վայելելով՝ յաւիտեանս երջանիկ պիտի ըլլաք։ Քիչ մ'ալ Ենովքայ պատմութեանը նայինք։

Ենովք ուրիշ մարդոց պէս մարդ էր, բնականաբար մեղաւոր, նաեւ ուրիշ մեղաւոր մարդոց մէջ կը բնակէր. բայց ապաշխարելով ցերոջը ծառայութեանը դարձած էր։ Եթէ դուք այն ժամանակ աշխարհիս մէջ եղած ըլլայիք, թերեւս անոր և ուրիշ մարդոց մէջտեղ մեծ տարբերութիւն մը պիտի չտեսնէիք. այլ անիկա ալ իր դրացիներուն պէս աշխարհի գործերով զբաղած մէկը պիտի երեւէր ձեզի։ Բայց մինչ Ենովք այսպէս կը զբաղէր, անոր սիրտը երկնաւոր բաներուն վրայ էր. մինչ ուրիշներն իրենց դանձերը հոս կը դիզէին, անիկա իր դանձը երկինք կը դիզէր։ Մինչ ուրիշներն 'ի կորուստ տանող լայն ճամբուն մէջէն կը քալէին, անիկա Աստուծոյ հետ կը քալէր, շարունակ իր մտաց առջեւը կը բերէր յաւիտենական բաները, միշտ Աստուծոյ, երկնից և դժոխոց վրայ կը խորհէր, և այնպէս կը գործէր որպէս թէ ասոնց ամէնքն ալ կը տեսնէր։ Մեղաց դէմ կը հսկէր, բոլորովին սուրբ ըլլալ կը փափաքէր, և Աստուծոյ միշտ աղօթք կ'ընէր։ Ցերոջը օրէնքներուն այնպէս զգոյշ էր, և Աստուծոյ օգնութեամբն այնչափ սուրբ եղաւ, որ վերջապէս Աստուած զանիկա այս աշխարհէս երկինք առաւ։ Այս ամէնն

ալ անոր ունեցած հաւատքին արդիւնքն էր։

Հիմա կը յուսամ թէ այս դրքոյկը կարդացողները նոյն պատուական հաւատքը պիտի ունենան, և ստէպ պիտի խորհին այն բաներուն վրայ, զորոնք Աստուած յայտնած է Սուրբ Գիրքին միջոցաւ, որպէս զի ճշմարիտ հաւատք ունենալով՝ իրենց պարտաւորութեանցը համեմատ գործեն և գործեն։ Եթէ բոլոր սրտով հաւատան ինչ որ Աստուածաշունչը կ'ըսէ Աստուծոյ, Քրիստոսի, դժոխոց, երկնից և պարտաւորութեանց վրայ, անատեն հաւատք ունեցած պիտի ըլլան և պիտի գործեն այն բաներն որ Աստուծոյ հաճոյ են։

Հաւատքի երրորդ օրինակը զոր Առաքեալը կը յիշէ Նոյինն է, որ իր բոլոր տնովը ողջ և առողջ պահուեցաւ, երբ ջրհեղեղը աշխարհիս վրայ եկաւ, ու ամբարիշտները խեղդեց։ Կը յիշէք թէ ինչ միջոցաւ աղատուեցան Նոյի ընտանիքը, որ Նոյ մեծ տապան մը կամ նաւ մը շինեց, որուն մէջ ինք և իր ընտանիքն ապահովութեամբ կեցան աշխարհս աւրող սոսկալի ջրհեղեղին երեսին վրայ։

Առաքեալը կը պատմէ մեզի թէ ի՞նչու համար Նոյ տապանը շինեց, « Հաւատքով Նոյ պատգամ առնելով Աստուծմէ՝ դեռ չերեւցած բաներուն համար, վախնալով Տապանը շինեց իր տունը փրկելու համար, որով աշխարհս դատապարտեց և ժառանգաւոր եղաւ այն արդարութեանը որ հաւատքով կ'ըլլայ"։ Եբր. ԺԱ. 7։

Աստուած շատ ժամանակ առաջ մարդոց իմացուցած էր թէ ջրհեղեղ պիտի ըլլար։ Նոյ հաւատաց Աստուծոյ խօսքին և անմիջապէս սկսաւ պատրաստութիւն տեսնել այդ բանին համար։ Երբ Աստուած ըսաւ թէ աշխարհս այնչափ մեղքով լեցուած է, որ ինք երկրիս երեսէն մեղաւորներուն բոլոր սերունդը ջնջելու որոշած է, Նոյ հաւատք ունեցաւ Տէրոջը խօսքին վրայ, վստահ էր թէ Աստուած ինչ որ ըսած էր՝ պիտի ընէր։ Ցայտնի է թէ այն բաղմաթիւ մարդոց մէջ Աստուածային ոգառնալեաց հաւատացող՝ Նոյի ընտանիքէն զատ ուրիշներ չկային։ Կ'երեւի թէ այլք անհոգ էին այդ բանին, անխորհուրդ կերպով կ'ապրէին, և առաջուան պէս իրենց ունայն ու չար ընթացից կը հետեւէին։ Բայց Նոյ այսպիսեաց կարգէն չէր. ինք Աստուծմէ պատգամ առնելով՝ կատարելապէս հաւատաց թէ ջրհեղեղ պիտի ըլլար, և վախնալով որ դուցէ այն ընդհանուր կործանման մէջ ինք ու իր տունը ընկղմին, անմիջապէս սկսաւ Աստուծոյ պատուիրածին համեմատ տապանը շինել։ Այսպէս ընելով իր հաւատքը ցուցուց, և ինչպէս որ Աստուածաշունչը կ'ըսէ, Նոյ այս վարմունքովը աշխարհս դատապարտեց, այսինքն անոր վարմունքը յանդիմանութիւն մը եղաւ այն ժամանակին չար մարդոց, որ չհաւատացին Աստուծոյ խօսքին։ Պատգամին տրուելէն շատ ժամանակ ետքը ջրհեղեղ եղաւ։

Աստուածաշունչը Նոյ նահապետը արդարութեան քարոզիչ կ'անուանէ։ Անշուշտ Նոյ բոլոր այն ճշմարտութիւնները՝ որոնք Աստուած ըսած էր՝ քարոզեց դրացիներուն և անոնց որ անոր ձայնը լսեցին։

Կը խօսէր անոնց իրենց չարութեանն և այն մեծամեծ յանցանաց վրայ, զոր Աստուծոյ առջև գործած էին։ Բայց անոնք փոխանակ ըղդաստանալու, բնաւ հոգ չէին ըներ Նոյի ըսածներուն։ Նոյ կը զգուշացնէր զանոնք մօտակայ վտանգէն, և կ'ըսէր անոնց թէ ջրհեղեղ պիտի ըլլայ. բայց անոնք բոլոր այս աղդարարութիւնները բանի տեղ չդրին։

Անոնց մտիկ չընելուն մի միայն պատճառը սա էր որ չհաւատացին անոր խօսքերուն։ Ոչ Աստուծոյ կողմանէ տրուած սպառնալիքներէն վախցան, ոչ քաղցր հրաւէրներով շարժուեցան, ոչ ալ ջերմեռանդ աղաչանքներէ ազդուեցան։

Նման էին այն անհոգ և անխորհուրդ մեղաւորներուն որ դեռ աշխարհիս մէջ կը դտնուին։ Քարոզիչները կը քարոզեն, և Քրիստոնեայ բարեկամք կ'աղաչեն այս մեղաւորներուն, բայց անոնք չեն ապաշխարեր, չեն հաւատար և ճշմարիտ քրիստոնեայ չեն ըլլար։ Ո՜հ, ո՜րչափ կարծր և չար են մեղաւորներուն սիրտերը։ Իմ սիրելի փոքրիկ ընթերցողներս, եթէ Սուրբ Գրոց մէջ գրուած Աստուծոյ խօսքը չէք նկատեր, չէք ապաշխարեր, հաւատք չէք ունենար

և Քրիստոսի ճշմարիտ աշակերտ չէք ըլլար, մինչ ձեր բարեկամները ձեզ կը խրատեն և կ'աղաչեն, դուք ալ պիտի նմանիք Նոյի օրերուն մէջ ապրող մեղաւորներուն։

Անոնք Աստուծոյ պատգամը մտիկ չընին և իրենց մեղքերէն չդարձան. մի՞թէ դուք ալ անոնց պէս չէք։ Ո՜հ, կ'աղաչեմ, դուք ալ անոնց պէս չըլլաք. խրատներու ականջ տուէք, և ճշմարիտ ու ապահով տապանին, այսինքն Քրիստոսի, դիմեցէք։

Երբ Նոյ մեծ աշխատանքով տապանին շինութեանը կը զբաղէր, և տեսնողները կը հասկնային թէ այդ աշխատութիւնը յատուկ նպատակ մ'ունէր, պէտք էր որ դոնէ հարցընէին և իմանային անկէ թէ ի՞նչ էր անոր նպատակը։ Անտարակոյս Նոյի վարմունքը բաւական վկայութիւն էր թէ անիկա անկեղծաբար կը հաւատար ջրհեղեղին դալուն։ Ուրեմն ինչո՞ւ համար այն ժամանակուան մարդիկը չվախցան. ի՞նչու դալու ահաւոր պատուհասէն ազատուելու հնար մը չփնտռեցին։ Առաջին պատճառը սա էր որ անոնք անհաւատ ու չար էին։ Իրենց մեղանչական զուարճութիւնները և աշխարհային դործերը կը սիրէին ու անոնց ետեւէն էին։ Տէր Յիսուս կ'ըսէ, "Ան օրերը ջրհեղեղէն առաջ, կ'ուտէին, կը խմէին... մինչեւ ան օրը որ Նոյ տապանը մտաւ։ Եւ չդիտցան՝ մինչեւ որ ջրհեղեղը եկաւ ու ամէնը վերցուց"։

Ի՜նչ յիմարութիւն, ի՜նչ խելագարութիւն։ Մեղքին ո՞րչափ դերի եղած էին. բայց այն տեսակ վարքը ճիշդ հիմակուան մեղաւորներուն ընթացքին կը նմանի։ Անհոգ մեղաւորները բուն այս ատենս կը տեսնեն թէ իրենց դրացիքն օրհնեալ Աւետարանին պարզ լուսովը լուսաւորուած ջերմեռանդ կերպով պատրաստութիւն կ'ընեն Աստուծոյ ահաւոր դատաստանին օրուան համար. իսկ իրենք անխորհուրդ և անշարժ կը մնան։ Կը տեսնեն իրենց Քրիստոնեայ բարեկամներն որ արթնութեամբ, և աղօթքով և անձնուրացութեամբ կ'ապրին, ու երկինքը կը դիմեն իրենց դանձը, բայց իրենք չեն վախնար իրենց սոսկալի վիճակէն։ Կը վախնամ թէ այս պզտիկ դիրքը կարդացողներուն մէջ կան ոմանք, որ սոնց պէս անհոգ ու անապաշխար են։ Ձեր վիճակը ինչպէ՞ս է, սիրելի ընթերցողք։

Երբ դուք կը տեսնէք որ ձեր հայրը կամ մայրը կամ քանի մը Քրիստոնեայ դրացիները պատրաստութիւն կ'ընեն մահուան և դատաստանին օրուան համար, անհոգ կը մնա՞ք. երբ կը տեսնէք ուրիշները որ տապանի մը կը դիմեն իրենց հոգիներուն փրկութեանը համար, և դուք այնպէս չէք ըներ, չէ՞ք վախնար։ Երբ ուրիշները կը վախնան Աստուծոյ անհնազանդ ըլլալէն և անհոգ ապրելէն, դուք անհոգ և անվախ պիտի կենա՞ք։ Եթէ այսպէս կ'ընէք, ո՞րչափ նման էք այն մարդոյ որ Նոյի ատենը կ'ապրէին։

Կ'աղաչեմ ձեզի այսպէս անհոգ և վտանգաւոր վիճակի մը մէջ մնալէն զգուշացէք. Ջանք ըրէք տապանը մտնելու որ ապահով ըլլաք։

Երբ տապանը շինուեցաւ ընցաւ, Նոյ, անոր ընտանիքը, երեք որդիքը և անոնց ընտանիքներն անոր մէջ մտան, և Աստուածաշունչը կ'ըսէ թէ Տէրը անոնց ետեւէն տապանը դոցեց։ Անտեն աշխարհիս բոլոր ուրիշ մարդոյ համար տապանը ընդունուելու ժամանակն անցած՝ և անոնք ալ դուրս մնացած ըլլալով, ամէնն ալ 'ի կորուստ մատնուեցան։

Անձրեւները սկսան գալ, մեծ անդունդներուն բոլոր աղբիւրները դուրս յորդեցին, ու երկնից պատուհանները բացուեցան։ Հաւանական է թէ անատեն դուրս մնացողներէն շատերն ուզեցին տապանը մտնել, և վազեցին անոր յուսալով թէ դուռը պիտի բացուէր, անտարակոյս աղաղակեցին և խնդրեցին ներս ընդունուիլ։ Բայց անկարելի էր ասիկա, քանզի Տէրը տապանին դուռը դոցած էր։ Երբ ձորերը ջրերով լեցուեցան, անատեն այս մեղաւորներն ահով ու դողով լեցուած թերեւս բլուրներուն ու լերանց վրայ փախան։ Բայց հոն ալ ապահով չեղան, քանզի ջուրերը երթալով կը յորդէին և ցած բլուրները կը ծածկէին ու հոն ժողվուած արք, կանայք և տղայք առ հասարակ կը խեղդուէին։ Քիչ մը ետքը բարձր բլուրները, վերջապէս ամենէն բարձր լեռները ջրով ծածկուե-

ցան։ Խեղճ մարդիկ քիչ մ՚ատեն ալիքներուն վրայ կը տարուբերուէին, ու ետքը անդունդներուն մէջ կ՚ընկղմէին։ Այդ չար սերունդէն հոգի մ՚անգամ չազատեցաւ. Տէրը բոլոր երկիրը ծով մ՚ըրաւ և բոլոր մարդիկ կորսնցուց։

Ո՞հ, ի՞նչ ահաւոր տեսարան էր այս. ո՞վ պիտի չվախնայ Տէրոջը դատաստաններէն, ո՞վ պիտի չդողայ, երբ Ան դայ իր թշնամիներէն վրէժ առնելու։

Բայց այս բոլոր կործանման և մահուան ատեն Նոյ նահապետն և անոր ընտանիքը ղերծ ու ապահով մնացին։ Տապանը զանոնք ջուրերու վրայ պահեց և Աստուած պաշտպանեց զանոնք։ Երբ ջուրերը սկսան ցածնալ, տապանը Արարատ լերան վրայ նստաւ։ Քանի մ՚օրուան մէջ ցամաքը սկսաւ երեւնալ, ու ջուրերը քաշուելով երկիրը ցամքեցաւ։ Նոյ և անոր ընտանիքը տապանէն դուրս ելլելով, աշխարհիս վրայ զիրենք միայն ողջ դտան, ու նորէն սկսան երկիր դործել։

Սիրելի տղայք, այս օրինակէն կը սորվինք թէ ի՞նչ է հաւատքն, և ի՞նչ է անոր ազդեցութիւնը։

Նոյ հաւատքով ազատուեցաւ ջրհեղեղէն, հաւատաց Աստուծոյ և իբրեւ ճշմարիտ հաւատացեալ դործեց։ Ասիկա է ճշմարիտ հաւատքը, և դուք ալ, սիրելի ընթերցողք, եթէ հաւատաք Աստուծոյ, եթէ հաւատաք ինչ որ Անիկա իր օրէնքներուն և յաւիտենականութեան, երկնից,

դժոխոց, փրկչին և ձեր պարտաւորութեանց վրայ ըսած է, և իբրեւ հաւատացեալ դործէք, ահա դուք ևս հաւատացեալ կ՚ըլլաք։ Այսպէս ըրէք և Աստուած ղձեղ պիտի ընդունի իբրեւ իրեն որդիքը։ Փրկիչը ղձեղ իրեն աշակերտ պիտի համարի։ Անատեն ապահով պիտի ըլլաք բոլոր այն հեղեղներէն որ ամբարիշտներուն վրայ կուդան։

Հոս փրկութեան տապանին մէջ պիտի մնաք, ու յաւիտեանս երկնից մէջ պիտի բնակիք։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԼՈՒԽ Գ

ԱԲՐԱՀԱՄ

Եբրայեցւոց թուղթին ԺԱ. գլխոյն մէջ առաքելոյն յիշած հաւատքի օրինակներուն կարգին հետեւելով, հիմա Աբրահամին կուդանք։ Աստուածաշնչին մէջ Աբրահամին վրայ դրուած պատմութենէն կ՚իմանանք թէ անիկա շատ դիպուածներու մէջ իր զօրաւոր ու դործունեայ հաւատքը ցուցուց, մանաւանդ երբ պատրաստ էր Աստուծոյ հրամանին հնազանդելով իր Որդին Իսահակը զոհել։ Այսպիսի յոժարակամ հնազանդութեան և Աստուծոյ վրայ այսպիսի անյողդողդ վստահութեան պատմութիւնն առանց

զարմանքի չենք կրնար կարդալ։ Աբրահամ պատրաստ էր ընել ինչ որ Աստուած անոր կը պատուիրէր, և այնչափ զօրաւոր էր անոր հաւատքը և անոր վստահութիւնն Աստուծոյ վրայ որ իրաւամբ հայր հաւատացելոց կը կոչուի։ Առաքեալը կ'ըսէ, «Հաւատքով Աբրահամ երբոր կանչուեցաւ՝ մոիկ ըրաւ ան տեղը ելլելու, որն որ ժառանգութիւն պիտի առնէր. և ելաւ գնաց, ու չէր գիտեր թէ ուր կ'երթայ»։ Աբրահամ գիտէր որ Աստուած երբէք պատուէր չտար առանց իմաստուն նպատակ մը ունենալու. ինք չէր կրնար տեսնել թէ ինչո՛ւ համար տրուեցաւ այն պատուէրը, սակայն գիտցաւ թէ իրեն համար աղէկ էր հնազանդիլ։

Քաջ համոզուած էր որ ինչ որ Աստուած կը հրամայէ ուղիղ է, և որ եթէ ինք հնազանդէր Աստուծոյ, Աստուած պիտի խնամէր զանի։

Այս էր Աբրահամին հաւատքը. անշուշտ կ'ըզգար թէ իր երկիրը, իր հօրը տունը թողուլ և անծանօթ երկիր մը երթալ դառն բան է։ Անտարակոյս շատ կը սիրէր իր բարեկամները և իր ծնած տեղը, այնպէս որ անոնցմէ զատուիլ շատ դժուար էր անոր. բայց խորհելով թէ Աստուած պատուէր տուած է այնպէս ընել, չերկմտեցաւ, ոչ ալ յապաղեցաւ, այլ անմիջապէս ելաւ գնաց ու չէր գիտեր թէ ուր պիտի երթայ։ Եթէ կ'ուզէք, կրնաք դտնել այս պատմութիւնը (այսինքն Աստուծոյ պատուէրը և Աբրահամին հնա-

զանդիլը) Ծննդոց գրքին մէջ։ «Եւ ասաց Աբրամին, Քու երկրէդ, և քու ազգականներէդ, ու քու հօրդ տունէն դնա ան երկիրը՝ որ ես քեզի պիտի ցուցընեմ»։ Ծննդոց ԺԲ. 1։ (Առաջ Աբրահամին անունը Աբրամ էր, ետքը փոխուեցաւ և Աբրահամ եղաւ)։ Անապեն՝ աշխարհս կռապաշտութեամբ լեցուն էր. մարդիկ զԱստուած մոռնալով՝ իրենց չինած կուռքերուն երկրպագութիւն կ'ընէին և ամէնքն ալ չար ու ապականեալ էին Աստուծոյ առջեւը։

Ճշմարիտ կրօնքը գրեթէ անհետ եղած էր աշխարհէս։ Արդարեւ Աբրահամին տանը մէջ Աստուածապաշտ անձինք կային, և ինք ճշմարտապէս բարեպաշտ և Աստուծոյ բարեկամ էր։

Բայց մարդիկ առ հասարակ ընկղմած էին մեղաց և բարոյական ապականութեան մէջ, և Աստուած լաւ համարեցաւ որ Աբրահամ զատուէր իր ազգէն, որպէս զի զերծ մնար այն ընդհանուր ապականութենէն։

Հաւանական է թէ Աստուած պատուիրեց Աբրահամին իր երկիրը և իր հօրը տունը թողուլ, և չթողուց անոր բոլոր կենացը մէջ հաստատուն բնակարան ունենալ, որպէս զի անիկա և անոր ընտանիքը չխառնուին այն չար ժողովուրդին հետ։

Աստուած խոստացաւ Աբրահամին բոլոր Քանանու երկիրը (որ հիմա Պաղեստին կը կոչուի,) տալ անոր և անոր սերունդին, բայց չթողուց

երեն հաստատ բնակարան ունենալ այն երկրին մէջ։ Ուստի Աբրահամ տուներ չշինեց, այլ վրաններու մէջ կը բնակէր, ու տեղէ տեղ կը փոխուէր. այսպէս անոր ընտանիքը զատ մնաց այն երկրին մարդիկներէն։ Թերեւս այսպիսի թափառական կեանքը հաճելի չէր Աբրահամին, և թերեւս անիկա շատ կը դժուարէր որ բնակութեան համար տուն մը չշինել երեն արդիլուեցաւ։ Բայց Աբրահամին համար բաւական էր գիտնալ որ Աստուծոյ կամքն այս էր, և ինք պատրաստ էր ընել ինչ որ Տէրն կարգադրած էր անոր համար։ Ահա այսպէս Աբրահամ իր հաւատքը ցուցուց։

Աբրահամ անատեն զաւակ չունէր, բայց շատ ծառաներ և աղախիններ ունէր, այնպէս որ անոր ընտանիքը բազմաթիւ էր։ Ատեն մը երբ թշնամի զօրաց մեծ բանակ մը անոր եղբօրորդին՝ Ղովտը գերի բռնեց, Աբրահամ երեք հարիւր տասնուութը սպառազինեալ մարդով գնաց ազատեց Ղովտը և անոր ընտանիքը։

Այս կը ցուցընէ թէ Աբրահամին ծառաները և քովը պահած ուրիշ մարդիկ, որոնց ամէնքը մէկտեղ անոր տունը կը կոչուէին՝ շատուր էին։ Աբրահամ ասոնց ամէնքն ալ Աստուածպաշտութեան մէջ կրթեց։ Ուր որ կը ճամբորդէր, և վրանները կը կանգնէր, հոն սեղան կը շինէր Տէրոջը։ Ինք քահանայ կամ պաշտօնեայ էր իր մեծ տանը մէջ, և կը սորվեցընէր իրեններուն զԱստուած սիրել և անոր ծառայել։

Ուրիշ բան մ'ալ կայ որ Աբրահամին հաւատքը յայտնեց, և մեզի կը ցուցընէ թէ ճշմարիտ հաւատքն ի՛նչ է։ Աստուած խոստացած էր բոլոր քանանու երկիրը Աբրահամին սերունդին տալ, բայց Աբրահամ զաւակ չունէր. ուրեմն ինչպէ՞ս պիտի կատարուէր Աստուծոյ խոստմունքը։ Աբրահամ չէր գիտեր թէ ինչպէս պիտի կատարուէր, բայց վստահ էր թէ արդարեւ պիտի կատարուէր։ Ահա այս էր անոր հաւատքը։ Աբրահամին ծերանալէն ետքը՝ Աստուած կրկնեց իր խոստմունքն ու ըսաւ անոր, "Զդերու բազմութեան հայր պիտի ըլլաս"։ Նաեւ անոր Աբրամ անունը փոխելով Աբրահամ կոչեց, որ կը նշանակէ "Հայր բազմութեան"։

Երբ Աբրահամ իննսուն և ինը՝ և կինն իննսուն տարեկան էին, Աստուած երեւցաւ անոր ու ըսաւ, "Սարրա որդի մը պիտի ծնանի"։ Այս պիսի պարագաներու մէջ եթէ Աբրահամին տեղ ուրիշ մը ըլլար թերեւս չէր հաւատար Աստուծոյ խոստմանը կատարուելուն, բայց Աբրահամ հաւատաց։ Պօղոս առաքեալ կ'ըսէ, "Եւ անհաւատութիւնով չտարակուսեցաւ Աստուծոյ խոստմունքէն, հապա հաւատքով զօրացած՝ Աստուծոյ փառք տուաւ, և իր մտքին մէջ հաստատ պահեց թէ ան որ խօսք տուաւ, ինքը կարող է ընելու ալ"։ (Հռովմ. Դ. 20, 21։)

Այս խոստմունքը անգամ մ'ալ զարմանալի կերպով մը կրկնուեցաւ, ինչպէս որ գրուած է Գիրք Ծննդոց Գլ. ԺԸ. 1-11 համարներուն մէջ։ "Եւ Տէրը երեւցաւ անոր Մամբրէի կաղնիներուն մէջը։ Ու անիկա օրուան տաք ատենը վրանին դուռը նստեր էր. և իր աչքերը վերցուց ու նայեցաւ, և ահա երեք մարդիկ կայներ էին իրեն մօտ. ու երբոր տեսաւ զանոնք, վրանին դռնէն վազեց զանոնք դիմաւորելու, ու մինչեւ գետինը ծռելով խոնարհութիւն ըրաւ, և ըսաւ, Տէր իմ, հիմա թէ որ շնորհք գտայ քու առջիդ, կ'աղաչեմ քեզի՝ քու ծառայիդ բնակարանէն մի անցնիր. կ'աղաչեմ ձեզի քիչ մը ջուր բերուի, ու ոտքերնիդ լուացէք, ու ծառին տակը հանգստացէք. և պատառ մը հաց բերեմ, ու սրտերնիդ զօրացուցէք, ետքը անցէք. քանզի ասոր համար ձեր ծառային քովը եկաք։ Եւ անոնք ըսին, ինչպէս որ ըսիր, անանկ ըրէ։ Եւ Աբրահամ արտորալով դէպ 'ի վրանը՝ Սարրային գնաց, ու ըսաւ, Շուտով երեք դրիւ բարակ ալիւր շաղէ, ու շօթեր շինէ։ Եւ Աբրահամ վազեց արջառներուն, ու մատաղաշ ու աղէկ որթ մը առաւ, ու պատանիի մը տուաւ. ան ալ շուտով պատրաստեց զանիկա։ Եւ կոգի ու կաթ ու իր պատրաստած որթը առաւ և անոնց առջեւը դրաւ, ու ինքը ծառին տակը անոնց քովը կայնեցաւ, ու անոնք կերան։ Եւ ըսին իրեն, Ո՞ւր է քու Սարրա

կնիկդ. ու ինքը ըսաւ, Ահա վրանին մէջն է։ Եւ Տէրը ըսաւ, Դալ տարի անշուշտ քեզի պիտի դառնամ, և ահա քու կնիկդ Սարրա որդի մը պիտի ունենայ. և Սարրա մտիկ կ'ընէր վրանին դրանը մէջ՝ որ Անոր ետեւն էր"։

Այսպէս հիւրասէրն Աբրահամ նորէն բերկրելով այն պատուական խոստման վրայ թէ որդի մը պիտի ունենար, թէպէտեւ հարիւր տարեկան էր և խոստման կատարումն ալ մարդու կարճ խելքով անհնարին կը թուէր, հաւատաց Աստուծոյ խօսքին։ Աբրահամ խորհեցաւ թէ Տէրոջը կարողութենէն վեր բան մը չկայ, ուստի և վստահ էր Աստուծոյ խօսքին թէ որդի մը պիտի ունենար իր ծերութեան ատենը։ Աստուած էր ըսողը, և Աբրահամ ասիկա բաւական համարելով խոստմունքին հաւատաց։ Ահա այս էր անոր հաւատքը։

Աստուծոյ սահմանած ժամանակը խոստումը կատարուեցաւ. բայց կատարումը այնչափ երկարեցաւ որ Աբրահամին հաւատքն աղէկ մը փորձուեցաւ, և այնպէս զօրաւոր գտնուեցաւ՝ որ Պօղոս առաքելոյն ըսածին պէս, "Զյուսացուելու բաներուն յուսով հաւատաց"։

Անատեն խոստմունքը կատարուեցաւ, Սարրա որդի մը ծնաւ Աբրահամին, և անունը Իսահակ դրուեցաւ։ Ցղուն ծննդեան ատենը շատ մեծ ուրախութիւն ըրին, և երբ տղան կաթէ կտրուեցաւ, Աբրահամ մեծ խնճոյք մը ըրաւ

բոլոր իր ընտանեացը։ Ընտարակոյս անոնք շատ ուրախացան, քանզի տեսան թէ Աստուած հաւատարիմ է իր խոստումները կատարելու, և բնաւ յուսակտուր չըներ իրեն ապաւինողները։ Նաեւ տեսան թէ ինչ պատճառ ունէին յուսալու թէ Աստուած պիտի կատարէր բոլոր այն խոստումները որ Աբրահամին համար ըրած էր, այսինքն թէ զանիկա շատ ազգերու հայր պիտի ընէր, քանանու երկիրը անոր սերունդին պիտի տար, և թէ երկրիս բոլոր ազգերն անով պիտի օրհնուէին։ Այս խոստումներն Աստուած ըրած էր, ու հիմա կը տեսնուէր թէ պիտի կատարուէին անոնց ամենքն ալ։ Արդարեւ Աբրահամ և անոր ընտանիքը պատճառ ունէին ուրախանալու։

Քանի մը տարի ետքը երբ Իսահակ պատանի եղաւ, ուրիշ սաստիկ փորձ մը հասաւ Աբրահամին հաւատքին։

Այս փորձին մէջ Աբրահամ ոչ միայն հաւատքին ինչ և որչափ զօրաւոր ըլլալը կը ցուցընէր, այլ և կ'ապացուցանէր թէ ինք ունէր այն հաւատքը։ Զօրաւոր վստահութիւն ունէր Աստուծոյ վրայ, և կատարելապէս համոզուած էր թէ իրեն համար ամենէն աղէկ բանը Աստուծոյ հնազանդիլն է, ուստի և պատրաստ էր Աստուծոյ որ և է պատուէրը կատարելու։

Առաքեալը կ'ըսէ, "Հաւատքով Աբրահամ իր փորձուած ատենը Իսահակը պատարագ մատոյց

և ան որ խոստմունքները առած էր, իր մէկ հատիկ որդին կը մատուցանէր"։ (Եբր. ԺԱ. 17)։ Այս դէպքին պատմութիւնը շատ սրտաշարժ է։ Ազդու կերպով մը "Աստուծոյ քաղցրութիւնը ու խստութիւնը" կը յայտնէ։ Աստուած առանց պատճառի պատուէր չտար, և իր բոլոր պատուէրները յօգուտ մարդոց կուտայ, բայց մարդոցմէ կը պահանջէ որ թէ իրեն և թէ իր պատուէրներուն հնազանդին առանց պատճառը քննելու։

Աստուած երբեմն այնպիսի պատուէր մը կուտայ որուն պատճառը մարդիկ չեն տեսներ, և թերեւս դժուարաւ կը համոզուին թէ այն պատուէրն իրենց օգտին համար է. սակայն Աստուած կը պահանջէ անոնցմէ որ հնազանդին այն պատուէրին, և հետեւութիւնը, ինչ որ ըլլայ, անոր թողուն։ Աբրահամ ասիկա ըրաւ։ Իր որդին Իսահակը ողջակէզ մատուցանելու պատմութիւնը հաւանակաբար Աստուծոյ վստահելու այնպիսի օրինակ է, որ աշխարհիս վրայ անոր նման ուրիշ մը երբէք գտնուած չէ։ Այս պատմութիւն գրուած է Ծննդոց մէջ (Գլ. ԻԲ. 1–13։) "Ու եղաւ որ աս բաներէն ետքը Աստուած փորձեց Աբրահամը, ու ըսաւ անոր, Ով Աբրահամ. և անիկա ըսաւ, Ահա հոս եմ։ Եւ անիկա ըսաւ, հիմա քու սիրած մէկ հատիկ որդիդ Իսահակը առ, ու Մորիայի երկիրը գնա, և հոն զանիկա ողջակէզ ըրէ լեռներուն մէկուն

վրայ՝ որն որ ես քեզի պիտի ըսեմ։ Եւ Աբրա-
համ առաւանց կանուխ ելաւ, ու իր իշուն
համեցը դրաւ, և իր հետը երկու ծառայ, ու
իր Իսահակ որդին առաւ. և ողջակէզի համար
փայտ ճեղքեց, ու ելաւ գնաց ան տեղը որ Աս-
տուած իրեն ըսաւ։ Ու երրորդ օրը Աբրահամ
իր աչքերը վեր վերցուց, ու հեռուէն տեսաւ
ան տեղը։ Եւ Աբրահամ ըսաւ իր ծառաներուն,
դուք իշուն հետ հոս մնացէք, և ես ու տղան
մինչեւ հոն երթանք, ու երկրպագութիւն ը-
նենք, և նորէն ձեզի դառնանք։ Ու Աբրա-
համ ողջակէզին փայտերը առաւ, ու իր որ-
դւոյն Իսահակին վրայ դրաւ, և ինքն իր ձեռքը
առաւ կրակը ու դանակը, ու երկուքնին մէկ-
տեղ գացին։ Եւ Իսահակ իր հօրը Աբրահամին
խօսեցաւ ու ըսաւ, Հայր իմ. և անիկա ըսաւ,
Ահա հոս եմ, որդիս։ Եւ անիկա ըսաւ, Ահա
կրակը ու փայտը, բայց ողջակէզ ըլլալու դառը
ո՞ր է։ Եւ Աբրահամ ըսաւ, Աստուած իրեն
ողջակէզ ըլլալու դառը պիտի պատրաստէ, որ-
դեակ իմ։ Այսպէս երկուքը մեկտեղ գացին։
Ու եկան ան տեղը որ Աստուած անոր ըսած
էր. և Աբրահամ հոն սեղան շինեց, ու փայ-
տերը շարեց, և իր որդին Իսահակը կապեց,
ու զանիկա սեղանը՝ փայտերուն վրայ դրաւ։
Եւ Աբահամ իր ձեռքը երկնցուց, ու դանակը
առաւ որ իր որդին մորթէ։ Եւ Տէրոջը հրեշ-
տակը երկինքէն անոր կանչեց, ու ըսաւ, Աբ-

րահամ՝ Աբրահամ, և անիկա ըսաւ, Ահա հոս
եմ։ Եւ ըսաւ, Տղուն ձեռք մի դպցըներ, և
անոր բան մը մի ըներ. քանզի հիմա գիտցայ
որ Աստուծմէ կը վախնաս, որովհետեւ քու մէկ
հատիկ որդիդ ինծմէ չխնայեցիր։ Եւ Աբրահամ
իր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ, և ահա
իր ետեւը խիտ մացառներուն մէջը եղջիւրնե-
րէն բռնուած խոյ մը կար ու Աբրահամ գնաց,
ու խոյը առաւ, և զանիկա իր որդւոյն տեղը
ողջակէզ մատուց"։

Ի՜նչ մեծ փորձ էր այս, և որչափ հանդար-
տութեամբ և հաստատամտութեամբ Աբրահամ
յառաջ կ'երթար Աստուծոյ հրամանը կատարե-
լու, և երբ փորձով տեսնուեցաւ թէ Աբրահամ
Աստուծոյ պատուիրած բոլոր բաները պիտի ը-
նէր, որչափ շուտով Աստուած արգիլեց Իսա-
հակին մահը։

Այս օրինակին մէջ կը տեսնենք ճշմարիտ հա-
ւատքին ամենէն գօրաւոր գործողութիւնը։
Արդարեւ Աստուած շատ խիստ պատուէր դրաւ
Աբրահամին վրայ, այնպիսի պատուէր մը որ
գրեթէ ուրիշին վրայ երբէք չդրաւ։ Բայց ան-
շուշտ պատճառ ունէր այսպէս ընելու. Աս-
տուած ուզեց որ մարդիկ հաւատոյ և հնա-
զանդութեան աղդու օրինակ մը տեսնեն։ Աբ-
րահամ կատարեալ հանդարտութեամբ և հնա-
զանդութեամբ փորձը կրեց։ Երբ Աստուծոյ
պատուէրը լսեց, քնաւ տրտունջ չբրաւ, այլ

անմիջապէս սկսաւ գործադրել զայն։ Կրնանք խորհիլ թէ մարդոց մեծագոյն մասը պիտի չանային պատճառ դառնելու այսպիսի պատուէրի մը չհնազանդելու համար։ Աբրահամ կրնար այնպէս խորհիլ և գործել, եթէ հաւատք չունենար և Աստուծոյ հնազանդելու անհոգ ըլլար։

Աբրահամ կրնար ըսել թէ Իսահակ մէկ հատիկ սիրելիս է, ուրեմն ինչպէս զոհեմ զանիկա. եթէ որևէ մէկը սպաննել մեղք է, ուրեմն ո՞րչափ առաւել մեծ չարութիւն է իմ հարազատ որդիս սպաննել, նաեւ Աստուած խոստացաւ թէ Իսահակով ինծի սերունդ պիտի կոչուի. ուրեմն եթէ Իսահակը սպաննուի, այս խոստմունքն ի՞նչպէս պիտի կատարուի։ Աստուած խոստացաւ նաեւ բոլոր այս երկիրը (ուր ես պանդուխտ կը բնակիմ) իմ սերունդիս տալ, ի՞նչպէս պիտի կատարուի այս խոստումը, եթէ իմ որդիս Իսահակը ողջակէզ ընեմ, Աստուած ի՞նչպէս զիս ազգերու հայր պիտի ընէ, և ի՞չպէս բոլոր ազգերն ինծմով և իմ սերունդովս պիտի օրհնուին, եթէ իմ մէկ հատիկ որդիս մեռնի. եթէ իմ հարազատ որդիս սպաննեմ դրացիներս ի՞նչ պիտի խորհին իմ ու իմ կրօնքիս վրայ, կամ իմ կինս Սարրա ի՞նչ պիտի ըսէ, եթէ սպաննեմ այս որդիս զոր մեր ծերութեան ատենը ստացանք։

Աբրահամ կրնար յառաջբերել բոլոր այս դժուարութիւններն իբր պատճառ Աստուծոյ

պատուէրին չհնազանդելու. բայց չուզեց այսպէս ընել, ոչ ալ խօսք մը կամ տրտունջ մը հանեց բերնէն, քանզի անգամմը Աստուծոյ պատուէրը լսելէն ետքը ուրիշ բան չխորհեցաւ բայց միայն հնազանդիլ։

Աբրահամ այն ատենը չհասկցաւ թէ ի՛նչպէս իրեն կամ ուրիշներու օգուտ պիտի դար անոր այս պատուէրին հնազանդելէն, և թէ ի՛նչպէս իր ընտանիքն ու դրացիք պիտի համոզուին թէ անոր ըրածը չարութիւն չէր. չհասկցաւ նաեւ թէ ի՛նչպէս Աստուծոյ խոստումները պիտի կատարուէին եթէ Իսահակ զոհուէր։ Բայց զգալով թէ այս բաները իրեն խորհիլ չէր էյնար, զանոնք Աստուծոյ յանձնեց՝ հաւատալով թէ Աստուած անոնց բոլորն ալ պիտի հոգար։

Աբրահամ հաւատաց թէ կերպով մը Աստուծոյ խոստումները պիտի կատարուէին, և թէ իր պարտաւորութիւնն և իրեն համար լաւագոյն բանն էր Աստուծոյ հնազանդիլ. այսպէս դալու բաներուն համար յօժար կամք և ուրախ սրտով վստահ եղաւ Աստուծոյ։ Ուստի եկաւ գնաց հաստատ որոշողութեամբ իր որդին զոհելու։ Երեք օր ճամբորդելէն ետքը՝ հասաւ այն լեռը զոր Աստուած ցուցուց անոր։ Անատեն իր ծառաները հոն թողուց որ դուցէ անոնք տեսնելով այն ցաւալի տեսարանը ետ կեցընէին զԱբրահամ իր նպատակէն։ Փայտերն Իսահակին վրայ դրաւ, ինքն ալ կրակը ու դա-

նակն առնելով անոր հետ լեռն ելաւ. Իսահակին հարցումը թէ «Հայր իմ, ահա կրակը ու փայտը, բայց ողջակէզ ըլլալու գառը ո՞ւր է», անշուշտ մեծ վիշտ պատճառեց հօրը սրտին։ Աբրահամ պատասխան տուաւ «Աստուած իրեն ողջակէզ ըլլալու գառը պիտի պատրաստէ, որդեակ իմ։

Աբրահամ զգաց թէ այս ահաւոր գործին մէջ ինք ուրիշ ընելու բան չունէր, բայց եթէ Աստուծոյ հնազանդիլ և կ'ուզէր որ իր որդին ալ նոյն զգացումն ունենար։ Անշուշտ ինք չէր յուսար թէ գառ մը պիտի պատրաստուէր իր որդւոյն տեղ, այլ կը կարծէր թէ զոհուելու գառն Իսահակ էր։ Ասիկա կը տեսնուի Առաքելոյն խօսքերէն (Եբր. ԺԱ. 19.) որ կ'ըսէ թէ Աբրահամ երբ Իսահակը զոհ մատուցանելու վրայ էր, «կը մտածէր թէ Աստուած մեռելներէն ալ կարող է յարուցանել»։ Այս ալ ուրիշ ապացոյց է Աբրահամին առ Աստուած ունեցած վստահութեանն ու զօրաւոր հաւատքին։

Երբ լեռան գագաթը հասան, Աբրահամ քարեր ժողվեց սեղան մը շինելու. թերեւս Իսահակն ալ օգնեց իր հօրն այս գործին մէջ։ Սեղանը շինուեցաւ, վրան ալ փայտերը շարուեցան. հասաւ այն զօրաւոր և անտանելի փորձութեան վայրկեանը։

Աբրահամ ի՞նչ զգաց անատեն, երկմտեցա՞ արդեօք. ոչ. հայրական քաղցրագութ սիրով

կը սիրէր իր որդին և կը խանդաղատէր անոր վրայ. բայց միթէ խնդրե՞ց Աբրահամ որ իր միամօր որդին ազատուէր այս դառն մահուանէն. ոչ, այլ միայն Աստուծոյ պատուէրը յիշելով հանդարտ ձեռքը բռնեց դիսահակ, կապեց զանի և սեղանին վրայ շարուած փայտերուն վրայ դրաւ։ Անոր հաստատ կամքը միթէ այն աստե՞ն ալ չակարացաւ, չըսա՞ւ կամ չզգա՞ց երբէք թէ սիրտը պիտի չդիմանար այն սոսկալի գործը կատարելու. ոչ. հաստատաբար որոշած էր Աստուծոյ հնազանդիլ, և այս որոշումէն ետ չկեցաւ. իր ձեռն երկնցուց ու դանակն առաւ որդին մորթելու։ Ո՜հ, ի՜նչ սոսկալի ժամ էր այն. բոպէ մը մնաց որ Իսահակ արիւնալից մահուամբ սեղանին վրայ զոհ ըլլար։

Բայց Աստուած այն վայրկենին մէջ արգիլեց այն ահաւոր գործը։ Ցանկարծ ձայն մը եկաւ երկինքէն, «Աբրահամ, Աբրահամ. և անիկա ըսաւ, Ահա հոս եմ։ Եւ ըսաւ, Ցղուն ձեռք մի դպցներ, և անոր բան մը մի ըներ. քանզի հիմա գիտցայ որ Աստուծմէ կը վախնաս. որովհետեւ քու մէկհատիկ որդիդ ինծմէ չխնայեցիր։ Եւ Աբրահամ իր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ, և ահա իր ետեւը խիտ մացառնեռուն մէջը եղջիւրներէն խոյ մը կար. ու Աբրահամ գնաց, ու խոյը առաւ, և զանիկա իր որդւոյն տեղը ողջակէզ մատուց»։

Հիմա փորձը լմնցաւ, և Աստուած գիտցաւ

ու բոլոր մարդիկ գիտցան թէ Աբրահամ Աստուծմէ կը վախնար, ու կը հնազանդէր անոր։

Անոր հաւատքը կատարելապէս փորձուեցաւ, և անոր օրինակէն ուրիշներ կրնան սորվիլ թէ միշտ աղէկ է որ մարդիկ ամէն առեն Աստուծոյ վստահին ու անոր հնազանդին, և թէ Աստուած միշտ կը հոգայ զանոնք որ անոր խօսքերուն կը հաւատան և պատուէրները կը կատարեն։ Աբրահամին օրինակն այս բանիս մեծ ապացոյց է։ Ո՜հ, ի՜նչ ուրախութեամբ ու շնորհակալութեամբ Աբրահամ ու որդին իրենց տեղը դարձան։ Որչափ երջանիկ էին անոնց սիրտերը երբ ճամբան Աստուածային սիրոյն ու անոր շնորհաց այս նոր ապացոյցին վրայ խօսելով նոր վստահութիւն մը ստացան, թէ իրենց սերունդին Աստուծմէ տրուած բոլոր խոստումները պիտի կատարուէին։

Աբրահամ այն փորձութեան և ուրախութեան տեղւոյն «Եհովայիրէ» անուն դրաւ, որ կը նշանակէ Տէրը պիտի նախախնամէ։

Այս անունը կարեւոր ճշմարտութիւն մը կը պարունակէ։ Անտարակոյս Աբրահամ առաջուց գիտէր և հաւատացած էր այս ճշմարտութեան, և թերեւս պէտք չէր անոր այսպիսի դժուար փորձ մը կրել իր օգտին համար, սակայն անոր փորձն ուրիշներուն օրինակ պիտի ըլլար, և անշուշտ շատերն այս օրինակէն քաջալերուելով Աստուծոյ պիտի վստահէին։

Կը փափաքիմ որ դուք, իմ ընթերցողներս, Աբրահամին օրինակին հետեւիք. և կ'ուզեմ որ յիշէք թէ ինչպէս Տէրը օրհնեց զԱբրահամ, քանզի նա Աստուծոյ խօսքերուն հաւատաց և Անոր պատուիրանքներուն հնազանդեցաւ։ Եթէ դուք հաւատաք ինչ որ Աստուածաշնչին միջոցաւ Աստուած ձեզի կը խօսի, ձեզ ալ նոյնպէս պիտի օրհնէ։ Յիշեցէք թէ ինչպէս Աբրահամ իր երկիրը ու իր հօրը տունը թողուց և օտար երկրի մէջ պանդխտեցաւ, ու Տէրը օրհնեց զանի։ Յիշեցէք նաեւ թէ փրկիչը ձեզի կ'ըսէ որ, եթէ անձնուրացութեամբ իրեն հետեւիք ու հայր, մայր, եղբայր, քոյր, տուն և արտ անգամ թողուք երբ հարկ է, և անոր աշակերտ ըլլաք, ձեզ պիտի օրհնէ. Աբրահամ հաւատաց՝ հնազանդեցաւ և օրհնութիւն ժառանգեց։

Դուք ալ կ'ուզէ՞ք հաւատալ՝ հնազանդիլ և օրհնութիւն վայելել։ Աստուծոյ շնորհաց կարօտ չէ՞ք, ներումի և փրկութեան պէտք չունի՞ք, ուրեմն Աստուծոյ խօսքերուն հաւատալով և անոր պատուէրները կատարելով, այս օրհնութիւնը վնտռեցէք։

Յիշեցէք նաեւ թէ ինչպէս Տէրը խնամեց զԱբրահամ, ան որ իր որդին զոհելու վրայ էր։ Թերեւս դուք պիտի չկարօտիք այսպիսի խնամոց. բայց պէտք ունիք որ Աստուած զձեզ աղատէ մեղքէն և դժոխքէն, և առաջնորդէ ձեզ

փրկութեան ճամբուն մէջ։ Երկնից երջանկութեան ու փառաց հասնելու համար անոր օրհնութեան կը կարօտիք։

Ուրեմն չէ՞ք ուզեր հաւատալ և հնազանդիլ Աստուծոյ։ Անոր օրհնութիւնը ստանալու մի միայն ճամբան այս է։ Ամէնքս մեր մեղաց պատճառաւ վտանգաւոր վիճակի մէջ ենք. խաղակին կրելու մահուանէն աւելի դառն մահուան մը ենթակայ ենք, և Աստուած մեզ այն մահուանէ ազատելու համար, մեր տեղը դառ մը պատրաստած է. «Ընկիկա մեր մեղքերուն քաւութիւն է, և չէ թէ մինակ մերիններուն, հապա բոլոր աշխարհին ալ»։ (Ա. Յովհ. Բ. 2։) Աստուծոյ դէմ մեղանչելով, յաւիտենական մահուան ցաւոց ենթակայ ենք, այսինքն անվախճան թշուառութեան վտանգի մէջ ենք։ Բայց Սուրբ Գիրքը կ'ըսէ, «Աստուած անանկ սիրեց աշխարհը, մինչեւ որ իր միածին Որդին տուաւ, որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»։ (Յովհ. Գ. 16։)

Երբ փրկիչն աշխարհ եկաւ, Յովհաննէս մկրտիչ զանի մատամբ ցուցնելով ըսաւ, «Ահա Աստուծոյ դառը»։ Ուրեմն Յիսուս է այն դառը զոր Աստուած մեզի համար պատրաստած է։ Անիկա մեզի համար չարչարուեցաւ ու մեռաւ, մեր տեղը սպաննուեցաւ։ Սիրելիներս, եթէ մեղքէն ու դժոխքէն ազատիլ կ'ուզէք, պէտք է որ Անոր հաւատաք։

Աբրահամի օրինակէն կրնաք հասկնալ թէ ի՞նչ է հաւատալը։ Աբրահամ հաւատաց Աստուծոյ խօսքերուն և Անոր պատուիրածին պէս ըրաւ։ Աստուած կը խօսի ձեզի Աստուածաշնչին միջոցաւ և կ'իմացունէ թէ ձեզ ազատելու համար իր Որդին զրկեց, և թէ Յիսուս ձեր մեղաց համար մեռաւ, ուստի եթէ դուք վստահիք և աշակերտ ըլլաք այս Փրկչին, անշուշտ պիտի փրկուիք։

Բայց պէտք է որ հաւատաք ինչ որ Աստուած ըսած է, և անոր պատուիրածին համեմատ գործէք։ Այս է ան հաւատալը որ զձեզ Աբրահամին պէս կ'ընէ, այս է ճշմարիտ հաւատքը։

Արդ, սիրելի բարեկամներս, ինչո՞ւ համար պիտի չհաւատաք Աստուծոյ որ իր Որդին զրկած է դառի մը պէս ձեզի համար զոհուելու։ Եթէ չհաւատաք ու չհնազանդիք Աստուծոյ, անշուշտ պիտի կորսուիք ու կորսուելու աղարժանի պիտի ըլլաք։

ԳԼՈՒԽ Ե

ՄՈՎՍԷՍ

Մովսէսի ծննդեան ու մանկութեան պատմութիւնը կը գտնուի Ելից Բ. գլխոյն մէջ։ Այն պատմութեան նայելով՝ Մովսէսի մայրը զանի

երեք ամիս ծածուկ պահելէն ետքը, փոյտէ տապանակի մը մէջ դրաւ ու գետեղերքը եղած շամբին մէջ ձգեց զանիկա։ Երբ Փարաւոնի աղջիկը գետը լուացուելու իջաւ, գտաւ տղան և աղաչեց զանի։ Այս գրքուկիս մէջ չեմ կրնար մանրամասն պատմել բոլոր այս բաները։ Պիտի սկսիմ այն ժամանակէն, որ Մովսէս մեծնալով իր մեծամեծ գործքերովը շատ երեւելի եղաւ, ու իր հաւատքը յայտնեց։ Նախ յիշեմ Առաքելոյն այն խօսքերն՝ որ կը գտնուին Եբր. ԺԱ. 26ին մէջ։ "Եւ աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը՝ քան թէ Եգիպտոսի գանձերը. ինչու որ դիտելով կը սպասէր վարձքի հատուցմանը"։

Մովսէս երեւելի էր Եգիպտոսի մէջ. թագաւորին աղջիկը որ զՄովսէս աղատած էր՝ իրեն որդեգիր ըրաւ զանի. Թերեւս Մովսէս թագաւոր ալ կ'ըլլար Փարաւոնի մեռնելէն ետքը, եթէ մինչեւ անատեն անոր պալատը մնացած ըլլար։ Առաքեալը կ'ըսէ, "Մովսէս աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը, քան թէ Եգիպտոսի գանձերը"։ Այս խօսքերէն յայտնի կը տեսնուի թէ Եգիպտոսի գանձերն անոր պիտի ըլլային, եթէ զանոնք չթողուր։

Այն երկիրներուն մէջ ուր թագաւորները կատարեալ իշխանութեամբ կը տիրեն, ինչպէս Եգիպտոսի թագաւորները կը տիրէին, ազգին գանձը թագաւորինն է. բայց յայտնի է որ Մով-

սէս թէ թագաւոր ըլլար և թէ չըլլար, եթէ փարաւոնի պալատը մնար, առատ հարստութիւն և մեծ պատիւ պիտի վայելէր։ Ունէր բոլոր այն բաները զոր աշխարհասէր մարդիկ կը յարգեն. ունէր պատիւ, քանզի հզօր թագաւորի մը ընտանեաց անդամ կը համարուէր. իշխանութեան տէր էր, և թերեւս աթոռակից, քանզի թագաւորի դստեր որդեգիր էր։ Ունէր հարստութիւն, քանզի բոլոր Եգիպտոսի գանձերուն մասնակից էր. ունէր իմաստութիւն, քանզի Սուրբ Գիրք կ'ըսէ, "Եգիպտացւոց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ, և զօրաւոր էր իր խօսքերովը ու գործքերովը" (Գործ. Է. 22)։ Աշխարհային բաներէն ինչ որ կ'ուզէր կըրնար ունենալ. մարդկային սրտին բոլոր ուզածներն ունէր։ Շատերը պիտի խորհին որ եթէ Մովսէսին տեղ իրենք ըլլային, և անոր պէս աշխարհային ամէն բան վայելէին, շատ երջանիկ պիտի ըլլային։ Սիրելի ընթերցողք, թերեւս երբեմն կը խորհիք որ, եթէ դուք ալ մեծ ու փառաւոր տուն, գեղեցիկ հանդերձ, զարդեր ու առատ հարստութիւն ունենաք երջանիկ պիտի ըլլաք ու ալ բանի մը պիտի չփափաքիք. բայց գիտցէք որ այս բաները չեն կրնար երբէք ձեզ երջանիկ ընել, և ոչ ոք ասոնցմով երջանիկ եղած է։ Պէտք է որ մարդ մը ասոնցմէ աւելի աղէկ բաներ ունենայ, եթէ ոչ չի կրնար ճշմարիտ երջանկութիւն վայելել։

պէտք է որ զԱստուած սիրելու և Անոր հնա-
զանդելու կամք ունենայ. պէտք է որ Աստու-
ծոյ վրայ հաւատք ունենայ և անոր պատուի-
բանքները կատարէ, ապա թէ ոչ չի կրնար ճըշ-
մարիտ երջանկութիւն գտնել, ոչ այս աշխար-
հիս, ոչ ալ հանդերձելոյն մէջ։

Մովսէս ճիշտ այսպէս խորհեցաւ, գիտցաւ
որ հարստութիւն ու պատիւ բնաւ չեն կարող
իր անմահ հոգւոյն փափաքները լեցընել, ուս-
տի Աստուծոյ կը ծառայէր և այն ծառայութենէն
կը փնտռէր իր երջանկութիւնը։ Լաւ հասկցաւ
թէ այս աշխարհս ու անոր մէջի ամէն բաներն
անցաւոր են, ուստի աւելի աղէկ աշխարհ մը
փնտռեց, այսինքն երկինքը, ուր իր գանձերը
դիզեց։ "Աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողո-
վուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղայ ժա-
մանակաւոր զուարճութիւնը վայելել"։

Մովսէս Աստուծոյ ըսածին կը հաւատար, և
անոր համար աւելի երկնից մէջ ընտրեց բաժին
ունենալ, քան աշխարհիս մէջ։ Աստուծոյ խոստ-
մանց կը հաւատար, և վստահ էր թէ Ան պիտի
խնամէ ու երջանիկ ընէ զինքը, եթէ ինք Աս-
տուծոյ հնազանդի և իր պարտքը կատարէ։

Այս հաւատքն էր որ զՄովսէս յօժարեցոյց
Եգիպտոսի գանձերն ու աթոռը թողուլ, աղ-
քատ և անարդ ժողովուրդի մը երթալ ու անոր
հետ միանալ։ Մովսէսի եղբարքը, այսինքն Իս-
րայէլի որդիքը, դերի էին Եգիպտոսի մէջ։

Կարծեմ թէ կը յիշէք Յովսեփայ պատմութիւնը,
թէ Եգիպտացւոյ ծախուեցաւ, ու երբ Քանա-
նու երկիրը սով եղաւ, անոր հայրն ու եղբարքը
Եգիպտոս եկան, ու Յովսէփ զանոնք խնամեց
ու Եգիպտոսի ամենէն աղէկ տեղը տուաւ ա-
նոնց բնակելու։ Անոնք քիչուոր էին երբ Եգիպ-
տոս եկան, բայց յետոյ շատ աճեցան, այնպէս
որ մեծ ժողովուրդ եղան։

Յովսեփայ հօրն ու եղբարցը մեռնելէն ետքը
Եգիպտացիք սկսան Իսրայէլացիները հարստա-
հարել։ Մովսէս առնցմէ էր, թէեւ փարաւոնի
տունը կը բնակէր. և տեսնելով իր եղբարց կրած
նեղութիւնները և Եգիպտացւոյ անգութ վար-
մունքը, շատ կը ցաւէր։ Իսրայէլացիները թէեւ
դերի ու դառն վիճակի մէջ էին, սակայն Աս-
տուծոյ սեպհական ժողովուրդն ու Աբրահամու
սերունդէն էին, և Աստուած խոստացած էր տալ
անոնց Քանանու երկիրը որ հոն բնակին։

Մովսէս գիտցաւ այս բաները, և որոշեց իր
խեղճ ու անարգուած եղբարց հետ միանալ և
ջանալ անոնց լաւութեանը միջոց մը գտնել.
ուստի թագաւորին պալատը թողուց ու աղքատ
Իսրայէլացւոյ հետ բնակեցաւ. թողուց իր ա-
նուանի և զուարթ ընկերները, և նեղեալներուն
ընկերացաւ. թողուց Եգիպտոսի հանգիստն ու
հարստութիւնը, և իբր քառասուն տարի անա-
պատը թափառեցաւ։ Մովսէս այս կերպով ցը-
ցուց իր հաւատքը։ Կը հաւատար այն մեծա-

մեծ խոստումներուն զոր Աստուած ըրած էր Իսրայէլացւոց, ուստի և յօժար կամօք միացաւ այս ժողովուրդին հետ։ Կը հաւատար որ Աստուծմէ Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ տրուած խոստումները պիտի կատարուին։

Հաւատաց թէ վերջապէս Իսրայէլի որդիքը պիտի հանդչին Քանանու երկրին մէջ, որ կաթ ու մեղր կը բղխէր։ Ուստի և Աստուծոյ նախախնամութեամբը հանեց իր եղբայրներն Եգիպտոսի երկրէն զանոնք Քանանու երկիրը տանելու։

Ընապատին մէջ քառասուն տարի թափառական կեանց մէջ երբէք Յերոմը խօսքերուն վրայ չտարակուսեցաւ, հապա միշտ առաջ նայելով՝ հաւատոյ աչօք տեսաւ իր եղբայրները խոստացուած երկրին մէջ հանգիստ նստած։ Այս հաստատ վստահութիւնն ունէր Աստուծոյ խօսքերուն վրայ և ըստ այնմ կը գործէր։ Աստուծոյ պահանջած հաւատքն այս է, և այս է այն հաւատքը որուն վրայ Աստուածաշունչը կը խօսի։

Աշխարհիս մարդիկն ընդհանրապէս այնչափ անձնասէր ու աշխարհասէր են, որ քիչերը կ'ուզեն աշխարհային զուարճութիւնները թողուլ, ու իրենց անձը Աստուծոյ գործին նուիրել։ Մարդոց շատերն իրենց բաժինն այս աշխարհիս մէջ կը փնտռեն, ու յաւիտենական բաներուն վրայ անհոգ են։ Անոնք կ'ընտրեն իրենց աղէկ բաները այս աշխարհիս մէջ ունենալ ու վայելել, նման այն հարուստ մարդուն, որ Փրկիչը կը յիշէ իր առակին մէջ։ Բայց Մովսէս այնպէս չէր։ Առաքեալը կ'ըսէ թէ, «Դիտելով կ'ըսպասէր վարձքի հատուցմանը»։ Անիկա այս ներկայ կենաց երջանկութեան չնայեցաւ, հապա գալու երջանկութեան։ Կատարելապէս հաւատաց որ եթէ Աստուծոյ ժողովրդեան հետ միանար ու անոնց աշխատութեանց ու նեղութեանց մասնակից ըլլար, աւելի խաղաղութիւն և երջանկութիւն պիտի ունենար, այս աշխարհիս մէջ անգամ, քան թէ բոլոր Եգիպտոսի հարստութիւններն ու զուարճութիւններն ունենալով։

Նաեւ հաւատաց որ եթէ իր անձն ուրանար և Աստուծոյ ծառայէր, երկնից մէջ յաւիտենական բնակարան պիտի ունենար, և ասիկա աւելի մեծ վարձքի հատուցում պիտի ըլլար անոր, քան աշխարհիս բոլոր ուրախութիւններն ու դանձերն ունենալ, Այս պատճառաւ «Աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղաց ժամանակաւոր զուարճութիւնները վայելել»։

Լաւ համոզուեցաւ որ եթէ Փարաւոնի պալատը թողուր և իր եղբարց հետ ծառայութեան մէջ մասնակից ըլլար, շատ փորձութիւններ պիտի ունենար, թագաւորէն պիտի հալածուէր, իր առջի ընկերներէն պիտի նախատուէր, իր կեանքը նեղութեամբ պիտի անցընէր։ Անոնց

բոլորն ալ գիտէր, բայց և այնպէս չերկմտեցաւ, Սուրբ Գրքին ըսածին պէս «Աւելի աղէկ սեպեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան թէ մեղայ ժամանակաւոր զուարճութիւնները վայելել». և թէ «Աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը, քան թէ Եգիպտոսի գանձերը», այսինքն աւելի աղէկ սեպեց կրօնից համար նախատուիլ, քան թէ մարմնաւոր մեծութիւն ունենալուն համար ուրիշէ շողոքորթուիլ։ Աւելի աղէկ սեպեց կրօնից համար չար մարդիկներէն անարգուիլ, քան թէ հարստութեան համար ուրիշէն գովուիլ, աւելի աղէկ սեպեց աշխարհիս մէջ աղքատ ապրիլ ու երկնից թագաւորութեան մէջ ժառանգութիւն ունենալ, քան թէ Եգիպտոսի թագաւորական գահը նստիլ և յաւիտենական կեանքէն զրկուիլ։

Կը փափաքիմ՝ որ ամէն ընթերցող օգուտ մը քաղէ Մովսէսին այս օրինակէն և անոր պէս հաւատայ թէ աշխարհիս բաներէն աւելի աղէկ բաներ կան։

Կ'ուզեմ որ իւրաքանչիւր մարդ կատարելապէս համոզուի թէ երկնից գանձը աշխարհիս բոլոր գանձերէն վեր է։

Եթէ դուք բոլոր սրտով կը հաւատաք ասոր, աւելի պիտի փափաքիք Յիսուս Քրիստոսի աշակերտ ըլլալ ու Աստուծոյ ծառայել քան թէ աշխարհիս հարստութիւնն ու պատիւը ստանալ։

Երբ ձեր անկողնոյն մէջ հիւանդ պառկած մեռնելու վրայ ըլլաք, աշխարհիս հարստութիւնը կամ պատիւը ձեզի ի՞նչ շահ պիտի ընէ։ Սակայն եթէ Յիսուսի աշակերտիք, ճշմարիտ հարստութիւն պիտի ունենաք, և յաւիտեանս երջանիկ և ուրախ պիտի ըլլաք։

Կ'ուզեմ որ Մովսէսի պէս հասկնաք ու հաւատաք թէ աւելի աղէկ է Աստուծոյ ժողովուրդին հետ միանալ, քան թէ մեղայ զուարճութիւնները վայելել. և Քրիստոսի կամ Քրիստոնէից հետ չարչարուիլ, քան թէ չար մարդոց հետ ընկերանալ, ու անոնցմէ շողոքորթուիլ։

Արդարեւ հիմա բարեպաշտ մարդիկ առջինները պէս չեն հալածուիր ու չեն չարչարուիր և պէտք է որ ասոր համար շնորհակալութիւն մատուցանենք Աստուծոյ. բայց տակաւին Քրիստոնեայ երկիրներու մէջ շատ անգամ ճշմարիտ Քրիստոնեայք կը նախատուին իրենց կրօնից համար. ոմանք ալ իրենց կրօնքը դաւանելու կը վախնան որ չըլլայ թէ իրենց ընկերներէն նախատուին ու ծաղրուին։

Մէկդի ձգեցէք այսպիսի վախ և երկիւղ. յիշեցէք որ Մովսէս «Աւելի մեծ հարստութիւն սեպեց Քրիստոսի նախատինքը քան թէ Եգիպտոսի գանձերը»։

Անոր օրինակէն քաջասրտութիւն առէք. եթէ զՅիսուս սիրէք և ձեր պարտաւորութիւնները կատարէք, Աստուած ձեզ պիտի հոգայ։

Ձեր բարեկամը պիտի ըլլայ, և անոր բարեկամութիւնը բոլոր մարդոց դովասանքներէն վեր է։

Կ'ուզեմ որ Մովսէսին պէս հաւատալով՝ կատարէք ինչ որ Աստուածաշունչը ձեզի կ'ըսէ։ Աստուած ձեզի կը խօսի, ինչպէս որ բոցակեզ մորենւոյն մէջէն խօսեցաւ Մովսէսին, սակայն հիմա բոցակեզ մորենիէն չխօսիր այլ Սուրբ Գրքէն։

Հաւատացէք թէ բոլորովին աղէկ է Աստուծոյ հնազանդիլ և իր պատուիրածին պէս ընել։ Եթէ այսպէս բոլոր սրտով հաւատաք և ըստ այնմ գործէք, ճշմարիտ հաւատք ունեցած պիտի ըլլաք։ Այս հաւատքն է որ Աստուծոյ հաճոյ է, մարդս Քրիստոնեայ կ'ընէ և հոգին կը փրկէ։

Սիրելի ընթերցողք, այս է այն հաւատքը զոր կը փափաքիմ որ դուք ունենաք, և ինչո՞ւ համար պիտի չունենաք։ Աստուծոյ պիտի չհաւատա՞ք, միթէ ճշմարիտ չէ՞ անոր խօսքը։ Ուրեմն ինչո՞ւ համար պիտի չհաւատաք անոր, և ինչո՞ւ համար այնպիսի կերպով չէք հաւատար որ պատուէրներուն համեմատ գործէք ալ։ Կարդացէք, քննեցէք և մտածեցէք այն բաներն, որ Աստուած յայտնած է Փրկչին վրայ Սուրբ Գրքին մէջ։ Յիսուս Քրիստոս եկաւ ձեզ փրկելու. եթէ կ'ուզէք անով փրկուիլ, պէտք է որ հաւատաք անոր։ Ձեր կարօտութիւնը լեցընելու չափ Փրկիչ մը չէ՞ անիկա։

Դուք մեղաւոր էք և մեղաւորաց համար Քրիստոսէ զատ ուրիշ Փրկիչ չկայ. ուրեմն պիտի չընդունի՞ք ղանիկա։ Աստուածաշնչին մէջ անոր վերաբերեալ խօսքերուն պիտի չհաւատա՞ք, անոր պիտի չապաւինի՞ք. անոր դիմել ապահովութիւն է, քանզի անկէ ուրիշ ապաստանարան չկայ։

«Ցեր Յիսուսին հաւատացէք ու պիտի փրկուիք»։ Այսպէս կ'ըսէ Ձեզի Աստուած իր Գրքին մէջ։ Բայց ձեր հաւատքը թող այնպիսի հաւատք ըլլայ որ ձեզ առաջնորդէ Աստուծոյ հնազանդելու, և Յիսուս Քրիստոսի պատուէրները կատարելու։ Առանց այս հաւատքն ունենալու երբէք գոհ մի ըլլաք, վասն զի ձեր հոգիներուն փրկութիւնն անկէ կախեալ է։

«Ան որ Որդւոյն կը հաւատայ՝ յաւիտենական կեանք ունի. և ան որ Որդւոյն չհնազանդիր անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ» (Յովհ. Գ. 36։)

ԳԼՈՒԽ Զ

ԴԱՆԻԷԼ ԵՒ ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ

Առաջին գլուխներուն մէջ պատմական օրինակներէն սորվեցանք թէ ի՛նչ է հաւատքը, և

թէ այն ի՛նչպէս կը յայտնուի այն բարի մարդոյ կենցաղավարութեամբ, այսինքն անոնց հաւատալովը Աստուծոյ խօսքին և անոր պատուիրաձին համեմատ գործելովը։ Այս գլխոյն մէջ պիտի խօսիմ քանի մը բարեպաշտ մարդոյ վրայ, որ իրենց հաւատքը ցուցուցին, Աստուծոյ արգիլած բաներն ընելէ ետ կենալով և չհնազանդելով մարդոյ այն պատուէրներուն որ Աստուծոյ խօսքին հակառակ էին։ Անոնց հաւատքը միւսներուն հաւատքէն տարբեր չէր, տարբերութիւնը հաւատքը յայտնելու եղանակին մէջ կը կայանայ։ Ուստի կը յուսամ թէ այս տեսակ օրինակներէն ոմանք յառաջ բերելը օգտակար պիտի ըլլայ իմ ընթերցողներուս։

Աստուածաշնչին մէջ այսպիսի շատ տեսակ օրինակներ կան, բայց ես միայն Դանիելին ու անոր հետ գտնուող երեք մանկանց օրինակը յառաջ պիտի բերեմ։ Թէ մանկութեան ատեն և թէ չափահաս ըլլալէն ետքը անոնց վարմունքը կը ցուցնէր թէ երբէք Աստուծոյ անհնազանդ պիտի չըլլային 'ի հաճոյս մարդոյ։ Այսպիսի վարմունքն ալ կը ցուցնէ թէ ի՛նչ է հաւատքը։

Դանիելի Ա. գլխոյն մէջ կը կարդանք թէ Նաբուգոդոնոսոր թագաւորը Երուսաղէմ գալով պաշարեց և առաւ զայն, Յուդայի Յովակիմ թագաւորն և անոր ժողովուրդն ալ գերեց ու տաճարին շատ անօթները Բաբելոն տարաւ։

Այն ժամանակ Հրէայք Աստուծոյ անհնազանդ ըլլալով Աստուած զանոնք մատնած էր իրենց թշնամիներուն ձեռքը, և այսպէս կապուած հեռու երկիր մը գերութեան տարուեցան։ Թէեւ անոնք մեծաւ մասամբ չար էին, և իրենց չար գործքերովը Աստուծոյ բարկութիւնն իրենց դէմ գրգռած էին, սակայն անոնցմէ կային ոմանք, որ երկիւղած և Աստուծոյ պատուէրներուն հնազանդ էին։ Անոնց մէջ Դանիէլ, Անանիա, Ազարիա և Միսայէլ անունով չորս բարեպաշտ պատանիք կային։ Երբ գերիները Բաբելոն հասան, Նաբուգոդոնոսոր թագաւորն իր պաշտօնէից մէկուն հրամայեց որ գերիներուն ամենէն հանճարեղ, գիտուն ու գեղեցիկ տղոցմէն քանի մը տղայ ընտրէ, և Բաբելոնի լեզուն և ուսմունքը սորվեցնելով անոնց՝ պատրաստէ զանոնք թագաւորին պալատը բնակելու։ Պաշտօնեային բաւական տղայք ընտրեց, որոնց մէջ էին Դանիէլ և յիշեալ երեք մանկունք։

Անոնց տարիքը յայտնի չէ, բայց հաւանական է թէ ութէն մինչեւ տասնուչորս կամ տասնուվեց տարեկան էին։ Թագաւորը հրամայեց որ իր աղնիւ կերակուրէն և գինիէն անոնց օրական ռոճիկ տալով, զանոնք այնպէս երեք տարի սնուցանեն, և ետքը անոնք թագաւորին առջեւը կայնին։ Դանիէլ միտքը դրաւ թագաւորին աղնիւ կերակրոյն ու գինիովը չպղծուիլ, և ներքինապետէն թոյլտուութիւն

խնդրեց անոնցմով ինքզինք չպղծել (Դան. Ա. 5, 8։)

Ահա նշանաւոր օրինակ բարեպաշտ պատանուոյ մը որ չուզեց Թագաւորին պատուէրին հնազանդիլ, քանզի համոզուած էր թէ այն պատուէրն Աստուծոյ օրէնքին հակառակ էր։ Անոր ընկերներն ալ, Անանիա, Միսայէլ և Ազարիա այնպէս կը խորհէին, և ամէնքն ալ որոշեցին չպղծուիլ Թագաւորին կողմանէ իրենց համար սահմանեալ ուռճկով։

Քաջ համոզուած էին թէ Աստուծոյ օրէնքը կ'արգիլէր անոնց այսպիսի բաները, ուստի և մերժեցին զանոնք։ Եթէ Թագաւորը լսէր անոնց այսպէս ընելը, թերեւս բարկանար, և թերեւս անոնք ի մահ դատապարտուէին։ Սակայն այս վախը չկրցաւ զանոնք անհնազանդ ընել Աստուծոյ։

Ամէն բան աչք առնելով, որոշեցին Աստուծոյ հնազանդիլ մանաւանդ քան թէ Թագաւորին։ Այսպէս ցուցուցին իրենց հաւատքը. հաւատացին Աստուծոյ խօսքին և պատրաստուեցան զիրենք յանձնել անոր խնամոցը։ Այս էր անոնց հաւատքը։ Եւ Աստուած խնամեց զանոնք, այնպէս որ, թէեւ անոնք ընդեղէն ու ջուր միայն կը գործածէին, անոնց երեսները Թագաւորին համադամներովը սնած տղոց երեսներէն աւելի աղէկ և դէր էին։ Երեք տարի ետքը երբ այս չորս մանկունք Թագաւորին

առջեւ տարուեցան ու քննուեցան, իմաստութեան ու գիտութեան վերաբերեալ բաներու մէջ ուրիշներէն տասնապատիկ գերազանց գտնուեցան և Թագաւորը զանոնք իր քով առաւ։ Անոնք ինչպէս իրենց մանկութեան ատենը, նոյնպէս չափահաս ըլլալէն ետքը երկիւղած էին։

Կը յուսացուէր թէ այսպէս պիտի ըլլար, այսինքն անոնք մեծնալէն ետքն ալ հաւատոյ միեւնոյն օրինակը պիտի ցուցընէին։

Ինչպէս որ իրենց մանկութեան ատենն Աստուծոյ խօսքին հաւատացին, անոր պատուիրանքներուն հնազանդեցան և անոր նախախնամութեանը վստահեցան, նոյնպէս պիտի ընէին մեծնալէն ետքը։

Եթէ մանկութեան ատեն չուզեցին Աստուծոյ անհնազանդ ըլլալ Թագաւորին կամքը հաճեցընելու համար, նոյնպէս պիտի ընէին մեծնալէն ետքը. և արդարեւ երբ փորձուեցան, անոնց հաւատքն անդրդուելի մնաց։ Առաջ Անանիա, Միսայէլ և Ազարիա փորձուեցան։ Նաբուգոդոնոսորի պաշտօնեայն այս մանկունքը Թագաւորին ներկայացընելէն առաջ զանոնք քովը կը պահէր։ Այս երեք մանկանց ուրիշ անուններ ալ դրուած էին, այսինքն Սեդրակ, Միսաք և Աբեդնագով։ Անոնց պատմութիւնը գրուած է Դան. Գ. գլխոյն մէջ «Նաբուգոդոնոսոր Թագաւորը մէկ ոսկիէ արձան մը շինեց, անոր բարձրութիւնը վաթսուն կանգուն, ու

լայնութիւնը վեց կանգուն. զանիկա Բաբելոնի գաւառը Դուրա դաշտին մէջ կանգնեց"։ Այս պատկերին Աստուած անուն դրաւ թագաւորը, քանզի երկրպագութեան համար չինած էր զայն։ Այս գործը հակառակ էր Աստուծոյ օրէնքին. տասնաբանեայ օրէնքին մէջ Աստուած կը պատուիրէ. "Դուն քեզի կուռք չշինես, ոչ ալ վերը երկնից մէջ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. Անոնց երկրպագութիւն չընես, ու զանոնք չպաշտես. ինչու որ ես քու Տէր Աստուածդ նախանձոտ Աստուած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս։ Եւ կ'ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն"։

Այս պատուէրը խստիւ կ'արգիլէ պատկերապաշտութիւնը։ Սակայն Նաբուգոդոնոսոր թագաւորը այս արձանը չինած էր և հրամայած էր իր բոլոր թագաւորութեան մէջ գտնուող ժողովրդոց այն պատկերին երկրպագութիւն ընել։ Իր տէրութեան գլխաւորները ժողվեց, և այսպէս հրաման ըրաւ անոնց, "Ո՞վ ժողովուրդներ, ազգեր ու լեզուներ՝ ձեզի կը զրուցուի. երբոր փողին, սրինգին, քնարին, ջութակին, տաւիղին, տիկին ու ամէն տեսակ նուագարաններուն ձայնը լսէք, Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած ոսկի արձանին առջեւը իյնաք, ու երկրպագութիւն ընէք. և ով որ չիյնայ ու երկրպագութիւն չընէ, նոյն ժամուն բորբոքած կրակի հնոցին մէջը պիտի նետուի" (Դան. Գ. 4–6։)

Ուստի երբ ձայնը լսեցին "Բոլոր ժողովուրդները, ազգերը ու լեզուները կ'իյնային ու Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած ոսկի արձանին երկրպագութիւն կ'ընէին"։ Միայն Սեդրաք, Միսաք և Աբեդնագով արձանին երկրպագութիւն չբրին. Տարակոյս չկայ որ, եթէ Դանիէլ հոն ըլլար, ան ալ իր ընկերներուն ըրածին պէս պիտի ընէր։ Անոնք գիտնալով թէ Աստուած պատուիրած է արձաններու երկրպագութիւն չընել, որոշեցին Աստուծոյ հնազանդիլ և ոչ թէ մարդոց։ Վստահ էին թէ Աստուած զիրենք պիտի հոգար, ուստի որոշեցին չմեղանչել թագաւորին կամ ուրիշին կամքը հաճեցընելու համար. Աստուծոյ վրայ հաւատք, զօրաւոր հաւատք ունենալով, այսպէս որոշեցին։ Ասոր վրայ թագաւորը շատ բարկացաւ։ Երբ հասկըցաւ թէ անոնք չհնազանդեցան իր հրամանին, մեծ բարկութեամբ զանոնք կանչել տուաւ իր առջեւ և ըսաւ անոնց, "Հիմա թէ որ պատրաստ է.ք... իմ չինած արձանիս երկրպագութիւն ընելու, աղէկ. բայց թէ որ երկրպագութիւն չընէ.ք, նոյն ժամուն՝ բորբոքած կրակի հնոցին մէջը պիտի նետուիք"։

Անոնք պատասխան տուին թագաւորին «Ո՛վ Նաբուգոդոնոսոր, աս բանիս վրայով քեզի պատասխան տալու հարկաւորութիւն մը չունինք։ Ահա մեր պաշտած Աստուածը՝ մեզ բորբոքած կրակի հնոցէն ազատելու կարող է. քու ձեռքէդ ալ մեզ պիտի ազատէ, ո՛վ թագաւոր»։ (Գլ. Գ. 16, 17։) Այս պատասխանին վրայ թագաւորն աւելի բարկանալով իր մարդոցը «հրամայեց որ հնոցը վառելու սովորութենէն եօթնապատիկ աւելի վառեն. ու իր զօրքին մէջը եղող զօրաւոր մարդոցը հրամայեց որ Սեդրաքը, Միսաքը ու Աբեդնագովը կապեն ու բորբոքած կրակի հնոցին մէջը նետեն»։ Անոնք ալ այնպէս ըրին, և այս երեք մարդիկը կապուելով բորբոքած կրակի հնոցին մէջ նետուեցան։ Հնոցը շատ տաքցած ըլլալուն համար թագաւորին մարդիկը որ անոր հրամանը կատարեցին, տաքութենէն անմիջապէս այրեցան։ Այս երեք մանկունքն ալ անոնց պէս այրեցա՞ն։ Ոչ, Աստուած պահեց զանոնք։ Անոնք Աստուծոյ ապաւինած էին. հաւատացած էին թէ Ան կարող էր զանոնք ազատել։ Ասոնց այս հաւատքն Աստուծոյ հաճոյ էր, և Աստուած ազատեց զանոնք։

Երկինքէն հրեշտակ մը երեւցաւ անոնց քով և զանոնք ազատեց, այնպէս որ ՁԼաս չկրեցին։ Թագաւորն ապշած նայեցաւ հնոցին մէջ և ըսաւ, «Ահա ես կրակին մէջ չորս արձրկուած

մարդ կը տեսնեմ որ կը քալեն. անոնք ամենեւին ՁԼաս մը չեն քաշեր. ու չորրորդին դէմքը Աստուածներու որդիի մը կը նմանի»։

Անատեն թագաւորը համոզուեցաւ թէ իր շինած ոսկիէ արձանը կամ կուռքը ոչինչ էր, թէ կռապաշտութիւնը յիմարութիւն է և թէ ճշմարիտ Աստուծմէ զատ ուրիշ Աստուած չկայ։

«Ան ատեն Նաբուգոդոնոսոր բորբոքած կրակի հնոցին դրանը մօտենալով, խօսեցաւ ու ըսաւ, Ո՛վ Բարձրեալ Աստուծոյն ծառաները, Սեդրաք, Միսաք և Աբեդնագով, դուրս եկէք ու հոս եկէք»։ Ու անոնք դուրս ելան առանց ՁԼասուելու բորբոքած կրակին զօրութենէն։ Անոնք այսպէս ապահով մնացած էին, քանզի անոնց Աստուածը պաշտպանեց զանոնք։

Սիրելի ընթերցողք, նայեցէք այս օրինակին և տեսէք թէ ի՞նչ է հաւատքը և ի՞նչ է անոր արդիւնքը։ Այդ երեք մարդիկը հաւատացին Աստուծոյ խօսքին և անոր վստահելով ահաւոր վտանգէ մը ազատուեցան։ Գիտնալով թէ Աստուած պատուիրած էր կուռք չպաշտել, անոնք չուզեցին Աստուծոյ անհնազանդ ըլլալ, թէպէտեւ թագաւորը կը պատուիրէր որ իրեն հնազանդին, անոնք ալ գիտէին թէ չհնազանդելով կրակի հնոցը պիտի նետուէին։ Սակայն մեղանչելու չհամոզուեցան, ոչ ալ ուզեցին մեղք գործելով կրակի հնոցէն ազատուիլ։ Ասոնց այս հաւատքն ու վարմունքը հաճելի էին Աստու-

ծոյ, և Աստուած պաշտպանեց և աղատեց զանանք։

Այս օրինակէն սորվեցէք Աստուծոյ վստահիլ. միշտ յիշեցէք որ ձեզի համար լաւագոյն բանը Աստուծոյ վստահիլ է. չարութիւն մի գործէք 'ի հաճոյս մարդկան։ Եթէ ուրիշները չարութիւն գործեն և ուզեն որ դուք անոնց հետեւիք, մերժեցէք անոնց խրատը և ըսէք, Չարութիւն պիտի չգործենք և Աստուծոյ դէմ պիտի չմեղանչենք։

Հիմա քիչ մը Դանիելին վրայ պիտի խօսինք, որուն հաւատքն ալ շատ փորձուեցաւ։

Անոր երեք ընկերներուն փորձէն ժամանակ մը եւքը, Դարեհ անունով ուրիշ թագաւոր մը Բաբելոնի տիրեց։ Ասիկա այնչափ պատիւ տուաւ Դանիելին, որ զանի իր թագաւորութեանը մէջ իրեն երկրորդ ըրաւ։ Դանիելի Զ. 14—23 ին մէջ կը գտնուի այս պատմութիւնը։ Դարեհ թագաւորին հրամանատարքն ու կուսակալները ղդանիել չէին սիրեր, մանաւանդ թէ կը նախանձէին անոր, քանզի անիկա նախապատիւ էր քան զնոսա։ Անոնք կռապաշտ էին, իսկ Դանիել ճշմարիտ Աստուածը կը պաշտէր, այս պատճառաւ անոնք կ'ատէին զանի. ուստի և որոշեցին դանդատի պատճառ մը գտնել անոր վրայ ու ներկայացընել թագաւորին ու մեռցընել տալ ղդանիել։ Բայց Դանիելի աղէկ ընթացքը կառավարութեան բոլոր գործոց մէջ լաւ ճանչցուած էր, և այնպէս հաւատարմութիւն ցուցուցած էր թագաւորին և բոլոր ժողովրդեան առջեւը, որ անոր թշնամիները չկրցան առիթ կամ պատճառ գտնել զանի ամբաստանելու։ Ուստի իրարու ըսին "Մենք աս Դանիելին դէմ ամենեւին մէկ պատճառ մը պիտի չգտնենք, բայց եթէ անոր դէմ անոր Աստուծոյն օրէնքին կողմանէ գտնենք"։

Որչափ աղէկ ապացոյց էր անոր բարութեանը, երբ անոր թշնամիներն անդամ չկրցան ամբաստանութեան բան մը գտնել անոր դէմ, և ասոր համար անոր կրօնքը պատճառ բռնեցին։ Գիտցան որ անիկա առանց զանցառութեան իր հանապազօրեայ աղօթքը կ'ընէր Աստուծոյ. ուստի և խորհուրդ ըրին անոր աղօթելու սովորութիւնը պատճառ բռնելով կորսնցընել զանի։

Այս խորհրդով եկան թագաւորին գացին և խնդրեցին անկէ հրովարտակ մը հանելով հրամայել որ երեսուն օր ոչ ոք աղօթք ընէ։ Թագաւորը չգիտցաւ թէ ինչ նպատակաւ կ'ուզէին այսպիսի օրէնք մը դնել։ Չէր կասկածեր որ անոնք իր թագաւորութեան ամենէն հաւատարիմ մարդը կորսնցընել կ'ուզէին։ Ուստի և հրովարտակ մը ստորագրելով հրաման ըրաւ երեսուն օր ոչ Աստուծոյ և ոչ մարդու մը խնդրուած մատուցանել, բայց միայն թագաւորին։

Հրովարտակը ստորագրուելէն եւքը, զայն փոխել անհնար էր, վասն զի Մարաց և Պարսից

օրէնքն այսպէս կը պահանջէր։ Ուստի օրէնք եղաւ որ եթէ ոք այն երեսուն օրուան մէջ աղօթք ընէր, առիւծներուն դուրը պիտի նետուէր ու հոն պիտի մեռնէր։

Դանիէլ երբ այս օրէնքը լսեց ի՞նչ ըրաւ, միթէ շարունակե՞ց աղօթք ընել։ Գիտէր թէ մէկ անգամ աղօթք ընելով մահուան պիտի դատապարտուէր. գիտէր թէ իր թշնամիներն այս օրէնքը հնարած էին զանի որոգայթի մէջ ձգելու և կորսնցընելու համար։ Հասկըցաւ թէ անոնց աչքերը միշտ իր վրայ պիտի ըլլային, և եթէ աղօթք ընելու շարունակէր անտարակոյս պիտի ամբաստանուէր։

Բայց չվախցաւ, այլ որոշեց իր պարտքը կատարել ու հետեւանքն Աստուծոյ թողուլ։ Համոզուած էր թէ հանապազօր աղօթք ընել իր պարտքն էր։ Գիտնալով թէ Աստուած հրամայած էր ասիկա, կը խորհէր թէ ոչ թագաւորը և ոչ այլ ոք իշխանութիւն ունէր արգիլել անոր այն բանն ընել. ուստի և որոշեց Աստուծոյ հընազանդիլ մանաւանդ քան մարդոյ։ Աստուածաշունչը կ'ըսէ, "Ու երբոր Դանիէլ իմացաւ թէ հրովարտակը ստորագրուեցաւ, իր տունը դնաց, ու իր սենեակին մէջը պատուհանները դէպ 'ի Երուսաղէմ բաց էին, և օրը երեք անգամ ծունկի վրայ դալով աղօթք կ'ընէր, ու իր Աստուծոյն գոհութիւն կը մատուցանէր իր առջի սովորութեանը պէս" (Դան. Զ. 10։)

Երբ այսպէս ըրաւ, գիտէր թէ առիւծներու դուրը պիտի նետուէր. բայց իր պարտքը զանց չըրաւ, և ուղեց առիւծներու կերակուր ըլլալ քան թէ մեղք գործելով իր կեանքն ազատել։

Կը հաւատար թէ Աստուած կարող էր զանի առիւծներուն բերնէն ազատել։ Կը հաւատար նաեւ որ, եթէ չազատուէր եւս, դարձեալ Աստուած զանի երջանիկ պիտի ընէր մահուանէն ետքը. Աստուծոյ ապաւինեցաւ և իր պարտքը կատարեց։ Այս էր անոր հաւատքը, և այսպէս ընելով Դանիէլ իր հաւատքը ցուցուց։

Թշնամիները զԴանիէլ թագաւորին ամբաստանեցին և զանի առիւծներուն դուրը նետելտուին։ Դանիէլ բոլոր գիշերը հոն մնաց, բայց առիւծները վնաս մը չըրին անոր, քանզի Տէրը պահեց զանի։

Երբ առտու եղաւ՝ թագաւորը աճապարանօք առիւծներուն դուրը գնաց և Դանիէլին ձայն տուաւ. ան ալ պատասխանեց, "իմ Աստուածս իր հրեշտակը ղրկեց, ու առիւծներուն բերանը գոցեց, ու ինծի վնաս չտուին"։ "Ան ատենը թագաւորը շատ ուրախացաւ, ու հրամայեց որ Դանիէլը դուրէն հանեն. և Դանիէլը դուրէն հանեցին, ու անոր վրան ամենեւին մէկ վնաս մը չգտնուեցաւ, վասն զի իր Աստուծոյն հաւատաց։ Եւ թագաւորը հրամայեց, ու Դանիէլին վրայով չարախօսութիւն ընող մարդիկները բերին, և զանոնք ու անոնց տղաքները

ու կնիկները առիւծներուն գուբը նետեցին. ու անոնք դեռ գուբին յատակը չհասած՝ առիւծները անոնց վրայ տիրեցին, ու անոնց բոլոր ոսկորները փշրեցին" (Դան. Զ. 22—24։)

Այս կերպով Դանիէլ ազատուեցաւ, վասն զի հաւատք ունէր. հաւատաց Աստուծոյ խօսքին և իր պարտաւորութիւնը կատարեց։ Զանց չըրաւ աղօթք ընել, թէեւ թագաւորը հրովարտակաւ պատուիրած էր աղօթք չընել։ Մարդոց պատուէրը մտիկ չըրաւ, Աստուծոյ հնազանդեցաւ և Աստուած պաշտպանեց զանի։

Այսպէս պիտի պաշտպանէ նաեւ զանոնք որ իրենց պարտաւորութիւնները կը կատարեն ու չեն խոտորիր հնազանդութեան շաւղէն։ Արդարեւ խոստմունք չկայ թէ Աստուած միշտ պիտի պաշտպանէ այն մարդոց կեանքը, որ անոր հնազանդելով մահուան վտանգի մէջ կ'իյնան։ Բայց խոստմունք եղած է որ, թէ մահ և թէ կեանք, "Ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան անոնց որ Աստուած կը սիրեն"։ Աստուած խոստացած է որ ինք անոնց հետ պիտի ըլլայ նեղութեան մէջ, և ուրախութիւն ու խաղաղութիւն պիտի շնորհէ իրեն հաւատացողներուն և զանոնք երկինք պիտի տանի։

Դանիէլի և անոր երեք ընկերներուն օրինակէն կրնաք քանի մը բան սորվիլ։

Կրնաք սորվիլ թէ ի՛նչ է Աստուծոյ հաւատալ և անոր վստահիլ, կրնաք սորվիլ նաեւ թէ ա-

մէն պարագայի մէջ պէտք է Աստուծոյ վստահիլ՝ հետեւանքն անոր թողլով։ Նոյնպէս կրնաք սորվիլ մերժել ուրիշներուն խրատը, երբ ձեզ կ'ստիպեն չարութիւն մը գործելու։ Երբէք մեղք մի գործէք ուրիշը հաճեցընելու համար։

Թերեւս պատահի ձեզի գտնուիլ չար ընկերներու մէջ որ պիղծ խօսքեր կ'ըսեն, սուտ կը խօսին, կիրակին կ'աւրեն, գողութիւն կ'ընեն, և կ'ուզեն որ դուք ալ անոնց պէս ընէք։

Թերեւս պիտի ծաղրեն ձեզ, երբ չուզէք անոնց պէս չար ըլլալ։ Երբ այսպիսի պարագաներու մէջ կը գտնուիք, յիշեցէք թէ Դանիէլ և անոր ընկերներն ինչ ըրին։

Դուք ալ անոնց պէս ըրէք ու երբ մարդիկ կ'ստիպեն զձեզ չարութիւն ընելու՝ ըսէք անոնց, Պիտի չընենք զանիկա։ Լաւ է ձեզի մեռնիլ քան թէ չար ընթացք մը բռնել և յաւիտենական տանջանաց արժանի ըլլալ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Սիրելի ընթերցողք, եթէ այս գրքոյկս մինչեւ հիմա ուշադրութեամբ կարդացիք անտարակոյս կը յիշէք ինչ որ ըսինք Աբելի, Ենովքայ, Նոյի, Աբրահամու, Մովսէսի, Դանիէլի և անոր երեք ընկերներուն վրայ, և թէ ինչպէս անոնք իրենց հաւատքը ցուցուցին։

Կը յիշէք նաեւ թէ ինչպէս այն հայրը իր աղ-

ջկանը սորվեցուց հաւատքին ի՛նչ ըլլալը, և թէ աղջիկը հօրը վրայ վստահ ըլլալով՝ իր սիրած խաղալիկը կրակը նետեց, գիտնալով որ հօրը խօսքին հնազանդիլ իրեն աղէկ պիտի ըլլար։ Անտարակոյս ձեր միտքն է ինչ որ ըսի քարի տակ պահուած դանձին վրայով։

Եթէ մէկը ձեզի հարցընէ «Ի՞նչ է հաւատքը», կրնաք պատասխան տալ թէ հաւատքն է ճշմարիտ համարել Աստուծոյ ըսածները, անոր խոստմանցը վստահիլ և անոր պատուէրներուն հնազանդիլ։ Եթէ մէկը ձեզի հարցընէ թէ ի՞նչ է Քրիստոնէական հաւատքը, կամ մեղաւորի մը արդարանալուն հաւատքը, կրնաք ըսել թէ՝ մտաց այն վիճակն է, որով մեղաւոր մը խոնարհութեամբ և ապաշխարութեամբ փրկութեան միակ յոյսը Յիսուսի վրայ կը դնէ, զանի կը սիրէ և Անոր կը հնազանդի։ Շատերը կը կարծեն թէ շատ դժուար է հասկընալ թէ ի՛նչ է հաւատք։ Արդարեւ այս նիւթիս վրայ շատ գրուածներ կան, որ նիւթը պարզապէս հասկըցընելու տեղ աւելի մթին կ'ընեն զայն։ Բայց պէտք չէ որ այսպէս ըլլայ. հաւատքը շատ պարզ բան մըն է, փոքրիկ տղայ մ'անդամ կրնայ հասկընալ և ունենալ զայն։ Պէտք չէ որ տասնուհինգ կամ քսան տարեկան ըլլալու սպասէք հաւատալու համար. եթէ կրնաք այս գրքոյկս կարդալ և հասկընալ, կրնաք նաեւ հաւատալ։

Շատ տղայք, որ վեց, ութը կամ տասը տարեկան էին այս հաւատքն ունեցան, իրենց հոգին փրկեցին և երկնից մէջ ժառանգութեան բաժին ընդունեցին։

Դուք, սիրելի ընթերցողք, քանի՞ տարեկան էք, վեց, ութը, տասը, տասներկո՞ւ կամ տասնուհի՞նգ տարեկան էք, ուրեմն բաւական չափահաս էք և ընդունակ Յիսուսի հաւատալու ձեր հոգւոյն փրկութեանը համար։ Գիտէք ինչ կ'ըսէ Աստուածաշունչը Փրկչին վրայ, և Փրկիչն ինչ խօսեցաւ խեղճ մեղաւորաց համար։

Գիտէք որ Տէր Յիսուս եկաւ կորսուածը փնտրուելու և փրկելու. անիկա երկնից ճամբան ցուցուց, և զմարդիկ իրեն բարեկամ ըլլալու հրաւիրեց՝, բայց սա պայմանաւ որ իրենց անձն ուրանան, իրենց խաչը վերցընեն և անոր ետեւէն երթան։

Գիտէք որ Յիսուս դատաստանի օրուան վրայ, երկնից և դժոխոց վրայ խօսեցաւ, և խոստացաւ փրկել բոլոր անոնք որ իրեն աշակերտ ըլլալով իր պատուէրներուն կը հնազանդին։

«Ան որ», ըսաւ, «հաւատայ ու մկրտուի, պիտի փրկուի, և ան որ չհաւատայ, պիտի դատապարտուի» (Մար. ԺԶ. 16։)

Գիտէք որ Յիսուս իր կեանքը շատերուն համար փրկանք տուաւ, խաչին վրայ դառն մահուամբ մեռաւ մեղաւորները փրկելու համար։ Հաւատք ունենալու համար այսչափս գիտնալ բաւական է ձեզի, եթէ բոլոր սրտով այս բանե-

ռուն հաւատաք և իբրեւ հաւատացեալ դոր-
ծէք, փրկարար հաւատք ունեցած կ'ըլլաք։

Չէ՞ք կրնար կամ չէ՞ք ուզեր այսպէս հաւատալ։

Թերեւս յիշէք, ինչպէս որ առաջ ալ ըսինք, թէ
Քրիստոնէական հաւատքին նպատակը Տէր Յիսուս
Քրիստոս է, Ան է միակ Փրկիչ հաւատացելոց, և
Անոր վրայ հաւատք ունենալը՝ մեղաց թողութեան
և յաւիտենական երջանկութեան պայման է։

Արդարեւ ճշմարիտ Քրիստոնեայն Յիսուսի հա-
մար ըսուած բաներէն զատ ուրիշ շատ բաներ-
ու ալ կը հաւատայ, այսինքն կը հաւատայ Աս-
տուածաշնչին մէջ Աստուծոյ բոլոր ըսածներուն,
և այն օրհնեալ Գրքին բովանդակ խօսքերն իբ-
րեւ Աստուծոյ պատգամ կ'ընդունի։ Բայց Քրիս-
տոնեայն մանաւանդ Քրիստոսի հաւատալով կը
փրկուի, քանզի անկէ «Ուրիշ անուն մը չկայ
երկինքին տակը մարդոյ մէջ տրուած, որ անով
կարող ըլլանք փրկուելու»։ Անկէ ուրիշ ճամ-
բայ մը չկայ փրկութեան։

Այս Գրքոյկին մէջ յիշուած հաւատացեալ-
ները, և անոնք որ Աստուծոյ Որդին չեկած՝
ապրեցան, դալու փրկչին հաւատացին։ Աբէլ,
Ենովք, Աբրահամ և ուրիշները հաւատացին
թէ իրենցմէ եռքը պիտի դար մեծ մարդարէն,
այսինքն Յիսուս Քրիստոս, զոր Աստուած խոս-
տացած էր յարուցանել իր ժողովրդեան հա-
մար։ Յիսուս ըսաւ, «Աբրահամ ցանկացաւ
իմ օրս տեսնելու, տեսաւ և ուրախացաւ»։

Հիմա բոլոր բարեպաշտ և ճշմարիտ հաւա-
տացեալք կը հաւատան թէ Փրկիչն եկած է, և
այս հաւատքն է որ անոնց փրկութիւնը կ'ապա-
հովցնէ, ինչպէս որ Սուրբ Գիրքը կ'ըսէ, «Հա-
ւատա Տէր Յիսուսին ու պիտի փրկուիս»։

Սակայն երբ մարդ մը մտաց այնպիսի վիճա-
կի մէջ է որ կը հաւատայ Աստուծոյ մէկ խօս-
քին, պիտի հաւատայ նաեւ Աստուծոյ որ և իցէ
խօսքին, երբ կը հաւատայ այն բաներուն զոր Աս-
տուած ըսաւ Հին կտակարանին մէջ, Նոր կտակա-
րանին մէջ ըսուածներուն ալ պիտի հաւատայ։

Այսպէս դուք եթէ Աստուծոյ մէկ խօսքին
հաւատաք, պիտի հաւատաք անոր բոլոր ըսած-
ներուն ալ։

Ասկէ կը սորվինք թէ հաւատքը միշտ մի և
նոյն է աշխարհիս բոլոր դարերուն մէջ։ Աբէլի
հաւատքը և հիմակուան բարի մարդոց հաւատ-
քը նոյն են։ Աբէլ Քրիստոսէն շատ տարի ա-
ռաջ ապրեցաւ, բայց եթէ հիմա ողջ ըլլար և
նոյն մտաց վիճակն ունենար զոր անատեն ու-
նէր, Տէր Յիսուսի հաւատացող մը պիտի ըլլար։

Սիրելի ընթերցողք, կը փափաքիմ որ դուք
ամէնքդ Տէր Յիսուս Քրիստոսի ճշմարիտ հա-
ւատացողներ ըլլաք. և այս Գրքոյկը գրեցի որ
ձեզ համոզեմ հաւատալու։

Պիտի չհաւատա՞ք Քրիստոսի, խորհեցէք թէ
ի՞նչ ըսաւ, ի՞նչ ըրաւ և ի՞նչպէս չարչարուեցաւ
ձեզի համար։

Մի՞ դրէք անոր բարի խրատներուն, քաղցր հրաւէրներուն, ղգուշութիւններուն և սպառնալեաց։ Խորհեցէք որ «Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր միածին Որդին տուաւ, որ ամէն ով որ անոր հաւատայ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»։

Հիմա պիտի չհաւատա՞ք. փրկիչը բաւական բան չըրա՞ւ ձեզ համոզելու անոր յանձնուիլ և անոր աշակերտ ըլլալ. ուրիշ ի՞նչ բան կրնար ընել ձեզի ղոր չըրաւ. ձեզի համար չմեռա՞ւ։ Անոր հետեւող՝ և բարեկամ պիտի չըլլա՞ք, պիտի չհաւատա՞ք ու պիտի չվստահի՞ք անոր։

Խորհեցէք, կ'աղաչեմ, թէ մեղաւոր ըլլալով, որչափ կարօտ էք փրկութեան։ Հաղարաւոր կերպով Աստուծոյ օրէնքներուն անհնազանդ գտնուեցաք, և արժանի էք այդ օրինազանցութեան համար յաւիտենական տանջանք պատժուիլ։

Այդ սոսկալի վիճակէն ուրիշ կերպով չէք կրնար փրկուիլ, բայց միայն Յիսուս Քրիստոսի հաւատալով։ Ո՜հ, ասոր վրայ ուշի ուշով խորհեցէք։ Մտածեցէք թէ մեղքը որչափ յանցաւոր ըրած է զձեզ Աստուծոյ առջեւ։ Այս բաներուն վրայ հարեւանցի մի մտածէք, այլ միտք բերելով ձեր սրտին չար խորհուրդները, կիրքերը, ձեր ներսը բնակող մեղանչական ղգացմունքը։ Ասոնց բոլորն ալ Աստուծոյ զզուելի են և Աստուծոյ բարկութեանն արժանի։ Ուստի

ներում գտնելու և այն բարկութենէն փախչելու համար ձեզի ուրիշ ճամբայ չկայ, բայց միայն Յիսուս Քրիստոսի հաւատալ։ Անիկա խոստացած է ձեզի ներել, եթէ դուք անոր հաւատաք և այսպէս անոր ըրած քաւութիւնը ձեզի սեփականէք։

Ուրեմն, կ'աղաչեմ, անոր դացէք և ոտքն ինկէք, անոր ձեզ փրկելու համար ըրածին վըստահ եղէք, և զձեզ անոր ծառայութեանը նուիրեցէք։

Գուցէ պիտի ըսէք, հաւատքը պարգեւ Աստուծոյ է, և եթէ Աստուած մեզի զայն չշնորհէ, չենք կրնար ունենալ զայն։

Այնպէս է, Աստուածաշունչն այսպէս կը սորվեցընէ. բայց եթէ չէք ղգար որ կարօտ էք հաւատոյ, չէք խնդրեր զայն. եթէ կըղդաք թէ առանց անոր պիտի կորսուիք, բոլորով սրտիւ պիտի չաղօթէ՞ք որ Աստուած ձեզի շնորհէ այն հաւատքը, և օգնէ ձեզի իր Որդւոյն հաւատալու. եթէ կըղդաք թէ դուք մեղայ ծանրութեան տակ ճնշուած էք, պիտի չաղաղակէ՞ք Փրկչին, «Տէր, աղատէ զիս», ինչպէս որ Պետրոս ըրաւ, երբ ծովուն մէջ ընկղմելու վրայ էր. ճըշմարիտ է թէ հաւատքը պարգեւ է Աստուծոյ, բայց Աստուած զանիկա անհոգ և անխորհուրդ մարդու չի տար. միայն անոնց կուտայ, որ կըղդան թէ կորսուելու վտանգի մէջ են և թէ առանց շնորհք ընդունելու պիտի կորսուին։

Անոնց կը շնորհէ, որ սրտի անձկութեամբ կը հարցնեն, «Ի՞նչ ընեմ որ փրկուիմ»։

Այս է մեզ այն վիճակն զոր կը փափաքիմ որ այս գրքոյկն ամէն կարդացող ունենայ։

Երբ սաստիկ կերպով մեղքէն յաղթահարուած է՛ք, երբ ձեր յանցանքն ու վտանգն կըզգաք, պիտի աղաղակէ՛ք Աստուծոյ և անոր օգնութիւնը պիտի խնդրէ՛ք. պիտի խնդրէ՛ք անկէ որ ձեզի կարողութիւն տայ Քրիստոսի վրայ հաւատալու և այսպէս ձեր փրկութիւնն ապահովցընելու։

Երանի թէ հիմա որ այս գրքոյկը լմնցընելու վրայ է՛ք՝ ձեր այդ կարօտութիւնը զգայի՛ք։ Երանի թէ ձենէ ամէն մէկն իր սրտին մէջ ըսէր, Պէտք է որ ճշմարիտ հաւատք ունենամ Յիսուսի վրայ ապա թէ ոչ պիտի կորսուիմ. այս հաւատքն Աստուծմէ պիտի խնդրեմ, ելլեմ երթամ իմ հօրս և ըսեմ անոր, օգնէ ինծի որ Յիսուսի հաւատամ և զանի սիրեմ, որպէս զի հոգիս փրկուի ու փրկչիս յաւիտեան ծառայեմ։

Սիրելի ընթերցողը, հիմա հարկ է որ վերջատամ այս գրքուկիս որ, ինչպէս կը յուսամ, ձեզի շատ օգտակար պիտի ըլլայ։

Աղօթք կ՚ընեմ որ ձենէ իւրաքանչիւր ոք Յիսուս Քրիստոսի ճշմարիտ հաւատացող ըլլայ, և կը յուսամ թէ զիրար պիտի տեսնենք երկնից արքայութեան մէջ։

2001

215
0026164